

«ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՅՆՈՒՄ» ԾՐԱԳԻՐ, ENPI/2013/334643

ԸՆՏԱՆԻՔԻ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՆՊԱՍՏՆԵՐ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ,
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ (EDRC), 2016



Ծրագիրը ֆինանսավորվում է
Եվրոպական Միության կողմից



ԸՆՏԱՆԻՔԻ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՆՊԱՍՏՆԵՐ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԽՈՒՄԲ.

Մուշեղ ԹՈՒՄԱՍՅԱՆ

Կարինե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Լիլիթ ՀԱԿՈԲՅԱՆ

Սույն փաստաթուղթը մշակվել է «Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՀԿ-ի կողմից «Քաղաքականությունների բարելավմանն ուղղված երկխոսություն և քաղաքացիական հասարակության մասնակցության ընդլայնում» ծրագրի շրջանակներում բյուջետային ծրագրերի գնահատմանն ուղղված ուսումնասիրությունների բաղադրիչի ներքո: Ծրագիրն իրականացվում է Օքսֆամի հետ համագործակցաբար՝ ԵՄ ֆինանսավորմամբ:

Արտահայտված տեսակետները և եզրահանգումները պատկանում են հեղինակներին. դրանք կարող են տարբերվել և չհամընկնել Եվրոպական Միության կամ ՀՀ պետական որևէ մարմնի պաշտոնական տեսակետների և, կամ դիրքորոշումների հետ:

Ծրագրային թիմը շնորհակալություն է հայտնում ՀՀ աշխարանքի և սոցիալական հարցերի նախարարությանը համագործակցության համար:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել՝ ՏՀՀԿ գրասենյակ՝ +374 (0) 60 540 289, info@edrc.am, www.edrc.am:

Հրատարակումից օգտվելիս պարզաճ հղումը պարտադիր է:

Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ բյուջետային ծրագրի գնահատում

© «Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն», 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Օգտագործված հապավումների ցանկ	4
Ամփոփագիր	5
1. Ներածություն	6
1.1 Նախաձեռնության մասին	6
1.2 Բյուջետային ծրագրերի գնահատման նպատակը	6
1.3 Կիրառված մեթոդաբանությունը	6
1.4 Հաշվետվության կառուցվածքը	7
2. «Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ» ծրագիրը	8
2.1 ԸԿԲՆ ծրագրի նպատակը և կարգավորման դաշտը	8
2.2 Նպաստների տեսակները և չափերը	9
2.3 Բյուջետային ֆինանսավորումը	10
2.4 Միջնաժամկետ և երկարաժամկետ նպատակադրումները	13
3. Ծրագրի ազդեցության և հասցեականության վերլուծություն	15
3.1 ԸԿԲՆ ծրագիրը և աղքատությունը Հայաստանում	15
3.2 ԸԿԲՆ ծրագրին հատկացվող բյուջեն և աղքատության պակասուրդ	18
3.3 ԸԿԲՆ ծրագրի հասցեականությունը	20
4. Ծրագրի ընկալումը և շահառուների գոհունակությունը	23
5. Անապահովության գնահատման բանաձևի վերլուծություն	26
5.1 Անապահովության գնահատման ցուցանիշները	26
5.2 ԸԱՄ-ի գնահատման վարժություն 4 անդամ ունեցող ՏՏ-ների համար	31
5.3 Անապահովության գնահատման բանաձևի բարելավման մոտեցումներ	32
6. ԸԿԲՆ ծրագրի բյուջետային ձևակերպումը և մոնիտորինգը	35
7. Հիմնական արդյունքների ամփոփում	38
7.1 ԸԿԲՆ ծրագրի համապատասխանությունը	38
7.2 Ձեռք բերված նպատակները և արդյունքները	39
7.3 Ռեսուրսների ներդրման արդյունավետությունը	39
7.4 Շահառուների գոհունակությունը և ԸԿԲՆ ծրագրի հասարակական ընկալումը	40
7.5 ԸԿԲՆ ծրագրի բյուջետային ձևակերպում և մոնիտորինգ	41
7.6 Հիմնական առաջարկություններ	41
Վիճակագրական հավելվածներ	43
Գծապատկերների ցանկ	48
Աղյուսակների ցանկ	49

Օգտագործված հապավումների ցանկ

ԱԱՀՆ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ԱԿԾ	Ազգային վիճակագրական ծառայություն
ԳՀ	գլխավոր համակցություն
ԴՊ	դժվարացել է պատասխանել
ԸԱՄ	ընտանիքի անապահովության միավոր
ԸԿԲՆ	ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ
ԸՀ	ընտրանքային համակցություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՆԱ	համախառն ներքին արդյունք
ՄԺԾԾ	ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր
մլն	միլիոն
մլրդ	միլիարդ
ՁՀ	չի հաշվարկվել
ՍԾՏՄ	սոցիալական ծառայության տարածքային մարմին
ՏՁՀԿ	Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն (EDRC)
ՏՏ	տնային տնտեսություն
ՏՏԿԱՀ	Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջական հետազոտություն
ՏՏԸՀ-2015	2015 թվականին ՏՁՀԿ կողմից իրականացված տնային տնտեսությունների ընտրանքային վիճակագրական հետազոտություն
ՔԲԵ ծրագիր	«Քաղաքականությունների բարելավմանն ուղղված երկխոսություն և քաղաքացիական հասարակության մասնակցության ընդլայնում» ծրագիր
ՔՀԿ	քաղաքացիական հասարակության կազմակերպություն

Ամփոփագիր

- «Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ» բյուջետային ծրագիրը (ԸԿԲՆ ծրագիր) Հայաստանում աղքատությանը և կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված ընտանիքների աջակցությանն ուղղված ամենակարևոր ծրագրերից մեկն է: Այն համապատասխանում է սահմանված քաղաքականությունների գերակայություններին և ռազմավարական նպատակադրումներին, հասարակության և շահառուների կարիքներին:
- ԸԿԲՆ ծրագիր արդյունքում շուրջ 105 հազար ընտանիքներ ստանում են դրամական աջակցություն պետությունից: Այն հանգեցրել է երկրում 2 տոկոսային կետով աղքատության և շուրջ կիսով չափ ծայրահեղ աղքատության կրճատման: Արդյունքում, ծայրահեղ աղքատների 44 տոկոսը և բոլոր աղքատների 27 տոկոսը ստացել են հասարակության աջակցությունը՝ միջին ամսական 30.4 հազար դրամի չափով: ԸԿԲՆ ծրագիրը իրականացվել է շահառուների բավականին բարձր գոհունակության պայմաններում:
- ԸԿԲՆ ծրագրի արդյունավետության մակարդակն էականորեն բարելավման կարիք ունի: Ներդրված ռեսուրսները կարող են առավել արդյունավետորեն փոխակերպվել սպասվող արդյունքների: Մասնավորապես, ներդրված դրամական միջոցները շուրջ 4-5 անգամ գերազանցում են երկրում ծայրահեղ աղքատության հաղթահարման համար անհրաժեշտ բյուջեն: Գործնականում լիովին իրատեսական է այս ծրագրի շնորհիվ Հայաստանում ծայրահեղ աղքատության դրսևորման իսպառ վերացումը և շատ աղքատության ցուցանիշի զգալի կրճատումը:
- ԸԿԲՆ ծրագրի հասցեականության բարձրացումը գործնականում շատ դժվար է իրականացնել՝ հաշվի առնելով ստվերային տնտեսության, եկամուտները թաքցնելու և հասարակության վերաբերմունքի և վարքագծի մի շարք դրսևորումներ: Այնուհանդերձ, սույն ուսումնասիրության շրջանակներում ներկայացվում են մի շարք գործուն առաջարկներ, որոնք կբերեն ԸԿԲՆ ծրագրի արդյունքների և կառավարման արդյունավետության բարձրացմանը:

1. Ներածություն

1.1 Նախաձեռնության մասին

Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնը (EDRC) հանրային ծրագրերի և քաղաքականությունների մոնիտորինգին և վերլուծությանն ուղղված ոչ առևտրային անկախ կազմակերպություն է (այսուհետ՝ ՏՀՀԿ), որը հիմնադրվել է Երևանում 2001 թվականին¹:

Եվրոպական Միության ֆինանսավորմամբ ՏՀՀԿ-ն, համագործակցելով Օքսֆամ միջազգային կազմակերպության հետ, իրականացնում է «Քաղաքականությունների բարելավմանն ուղղված երկխոսություն և քաղաքացիական հասարակության մասնակցության ընդլայնում» ծրագիրը (այսուհետ՝ ՔԲԵ ծրագիր): Այն մշակվել և իրականացվում է՝ նպատակ ունենալով բարձրացնել պետական բյուջետային ծրագրերի վերաբերյալ իրազեկվածության մակարդակը, հիմքեր ստեղծել քաղաքացիական հասարակության ու հանրային հատվածի արդյունավետ համագործակցության և իրազեկ քննարկումների ու որոշումների համար:

ՔԲԵ ծրագրի շրջանակներում ՏՀՀԿ-ն իրականացնում է գյուղատնտեսության, առողջապահության և սոցիալական պաշտպանության ոլորտների պետական բյուջեների պարզեցումներ, ՔՀԿ-ների բյուջետային գրագիտության և վերլուծական կարողությունների բարձրացմանն ուղղված միջոցառումներ, ինչպես նաև իրականացվող քաղաքականությունների և առանձին բյուջետային ծրագրերի մոնիտորինգ և գնահատում:

1.2 Բյուջետային ծրագրերի գնահատման նպատակը

ՔԲԵ ծրագրի առանձին բաղադրիչներից մեկը բյուջետային ծրագրերի գնահատմանն ուղղված ուսումնասիրություններն են: Բյուջետային ծրագրերի գնահատման ուսումնասիրությունները ներառում են քանակական և որակական հետազոտության զանազան մեթոդներ, որոնք իրականացվում են գործընկեր ՔՀԿ-ների հետ համագործակցաբար: Բյուջետային ծրագրերի գնահատման ուսումնասիրությունների արդյունքում մշակվում են համապատասխան հաշվետվություններ: Բյուջետային ծրագրերի գնահատման նպատակն է բարձրացնել ծրագրերի վերաբերյալ հանրային իրազեկվածության մակարդակը, ընդլայնել քննարկումները և երկխոսությունը, աջակցել քաղաքականություն մշակողներին՝ ծրագրերի արդյունավետության բարձրացման գործում:

1.3 Կիրառված մեթոդաբանությունը

ՔԲԵ ծրագրի շրջանակներում մոնիտորինգի և գնահատման համար ընտրվել են ՀՀ պետական բյուջեից պարբերաբեր ֆինանսավորվող 6 բյուջետային ծրագրեր: Այս ծրագրերը ընտրվել են հետևյալ 3 ոլորտներից՝ սոցիալական պաշտպանություն, առողջապահություն և գյուղատնտեսություն: Մոնիտորինգի և գնահատման ենթակա բյուջետային ծրագրերի ընտրությունը կատարվել է համապատասխան ոլորտների պատասխանատու պաշտոնյաների հետ քննարկումների արդյունքում՝ ՔԲԵ ծրագրի շահառու 40 ՀԿ-ների կողմից՝ համատեղ աշխատանքային հանդիպման ընթացքում²:

¹ Կենտրոնի և «Քաղաքականությունների բարելավմանն ուղղված երկխոսություն և քաղաքացիական հասարակության մասնակցության ընդլայնում» ծրագրի մասին մանրամասների համար այցելեք՝ www.edrc.am

² «Հանրային քաղաքականությունների շրջանակը սոցիալական պաշտպանության, առողջապահության և գյուղատնտեսության ոլորտներում» աշխատանքային հանդիպում, 22 հոկտեմբերի 2014թ, Երևան, Կոնգրես հյուրանոց

«Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ» բյուջետային ծրագիրը (ԸԿԲՆ ծրագիր) սոցիալական պաշտպանության ոլորտից մոնիտորինգի և գնահատման ենթակա ծրագրերից մեկն է: Ընդհանուր առմամբ, այս ծրագիրը ընտրված 6 ծրագրերի թվում ամենամեծ և թերևս, ամենակարևոր բյուջետային ծրագիրն է: ԸԿԲՆ ծրագրի շրջանակներում գործող անապահովության գնահատման համակարգը հիմք է ծառայում նաև «Սոցիալապես անապահովներին հիվանդանոցային բուժօգնության տրամադրում» բյուջետային ծրագրի համար:

Մոնիտորինգի և գնահատման մեթոդաբանությունը մշակվել է ՏՀՀԿ կողմից, որի մանրամասները ներկայացվել են համապատասխան «Մեթոդաբանական հաշվետվությունում»: Մոնիտորինգի և գնահատման ուսումնասիրությունները զուգորդվել են գրասենյակային և դաշտային աշխատանքներով՝ ներառելով քանակական, որակական և խառը հետազոտական զանազան մեթոդներ, մասնավորապես.

- Վիճակագրական տվյալների հավաքագրում և վերլուծություն,
- Քաղաքականության փաստաթղթերի ուսումնասիրություն և քննություն,
- Հարակից ուսումնասիրությունների և փաստաթղթերի ուսումնասիրություն,
- Հիմնական տեղեկացված անձանց հետ հարցազրույցներ,
- Շահառուների և փորձագետների շրջանում ֆոկուս խմբային քննարկումներ,
- Ծառայություն մատուցողների ուսումնասիրություն և հարցազրույցներ,
- Մարդկային պատմությունների արձանագրում և ներկայացում,
- Վիճակագրական ընտրանքային հետազոտություններ:

ԸԿԲՆ ծրագրի մոնիտորինգի և գնահատման համար, ի լրումն վերը նշվածների, տվյալների հավաքման կարևոր գործիք է հանդիսացել Տնային տնտեսությունների վիճակագրական ընտրանքային հետազոտությունը³: Այս հետազոտության ընտրանքը ներառել է երկու խոշոր խմբեր (կլաստերներ), դրանով իսկ հետազոտությունն, ըստ էության, տարանջատելով երկու առանձին, զուգահեռ հետազոտությունների՝ ՀՀ բոլոր ՏՏ-ների ընդհանուր հետազոտություն և ԸԿԲՆ ծրագրի շրջանակներում Նպաստառու ՏՏ-ների թիրախային հետազոտություն: Ստացված տվյալները վերլուծվել և առանձին հրապարակվել են «Սոցիալական պատկերը և նպաստառու ընտանիքները Հայաստանում» զեկույցում:

1.4 Հաշվետվության կառուցվածքը

Սույն հաշվետվությունը ներկայացնում է ԸԿԲՆ ծրագրի անկախ գնահատման արդյունքները: Այն բաղկացած է 6 բաժիններից: Ներածությանը հետևում է բաժին 2-ը, որը նկարագրում է ԸԿԲՆ ծրագիրը՝ դրա նպատակը, նպաստների տեսակները, ֆինանսավորումը, երկարաժամկետ թիրախները և այլն:

Բաժին 3-ում ԸԿԲՆ ծրագրի ազդեցության և հասցեականության վերլուծությունն է: Բաժին 4-ում ներկայացվում է ԸԿԲՆ ծրագրի հասարակական ընկալումը և շահառուների գոհունակությունը: Հաջորդ բաժնում անապահովության գնահատման բանաձևի վերլուծությունն է: Բաժին 6-ն անդրադառնում է Ծրագրի բյուջետային ձևակերպմանը և կատարողական ցուցանիշներին: Վերջին՝ 7-րդ բաժնում ամփոփվում են գնահատման արդյունքները և նախորդ բաժիններում ներկայացված առաջարկները:

³ Տե՛ս «Սոցիալական պատկերը և նպաստառու ընտանիքները Հայաստանում», ՏՀՀԿ 2015թ.

2. Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ ծրագիրը

2.1 ԸԿԲՆ ծրագրի նպատակը և կարգավորման դաշտը

«Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ» ծրագիրը (ԸԿԲՆ ծրագիր) սոցիալական պաշտպանության, մասնավորապես, անապահով սոցիալական խմբերին աջակցության բնագավառում շարունակաբար իրականացվող պետական բյուջետային ծրագիր է: Այս բնագավառում պետական քաղաքականության հիմնական նպատակը, ըստ 2016-2018 թվականների ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի (ՄԺԾԾ)⁴, բնակչության առանձին անապահով սոցիալական խմբերի կենսամակարդակի բարձրացումը և աղքատության նվազեցումն է⁵:

Ընտանեկան նպաստների համակարգը և դրան համապատասխան պետական բյուջետային ծրագիրը ներդրվել է 1999 թվականին: Այս համակարգի ներդրմամբ անցում կատարվեց մինչ այդ գործող, տարաբնույթ նպաստների և փոխհատուցումների համակարգից մեկ միասնական նպաստի համակարգի՝ առավել անապահով ընտանիքների նկատմամբ իրականացնելով հասցեագրված սոցիալական աջակցության քաղաքականություն⁶: Ընտանեկան նպաստների համակարգի հիմքում ընկած է դեռևս 1994 թվականին՝ մարդասիրական օգնության հասցեականությունն ու սոցիալական արդարությունն ապահովելու նպատակով ստեղծված «Փարոս» համակարգը:

1999-2007 թվականներին այս համակարգի շրջանակներում տրամադրվող պետական նպաստները անվանում էին «աղքատության ընտանեկան նպաստներ», այնուհետ, մինչև 2013 թվականը՝ «ընտանեկան նպաստներ», իսկ 2014 թվականի հունվարի 1-ից՝ «ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ» (այսուհետ տեքստում՝ նաև Նպաստներ):

ԸԿԲՆ ծրագրի իրականացումը կարգավորվում է հետևյալ հիմնական իրավական ակտերով՝

- ✓ «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենք

Այս օրենքը կարգավորում է Հայաստանում սոցիալական աջակցության տրամադրման հետ կապված հարաբերությունները, սահմանում է սոցիալական աջակցության հասկացությունը, սոցիալական ծառայությունների տեսակները, կազմակերպման և տրամադրման սկզբունքներն ու կարգը, ֆինանսավորման աղբյուրները, սոցիալական աջակցության կառավարման համակարգը:

- ✓ «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենք

Այս օրենքը կարգավորում է Հայաստանում պետական նպաստների տրամադրման հետ կապված հարաբերությունները, սահմանում է պետական նպաստի հասկացությունը, տեսակները և տրամադրման կարգը:

- ✓ ՀՀ կառավարության 30.01.2014թ. «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 145-Ն որոշում

Այս որոշումը սահմանում է նպաստների նշանակման և վճարման կարգերը, ընտանիքի անապահովության գնահատման կարգը, անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, ընտանիքների անապահովության գնահատման համակարգի տեղեկատվական բազայի ստեղծման և ձևավորման կարգը, ծրագրի իրականացումից բխող այլ կարգեր և ձևեր:

4 Այս նպատակը բխում է «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի դրույթներից:

5 ՄԺԾԾ-ն սահմանում է, որ այս բնագավառում 2016-2018 թվականների համար պետության հիմնական խնդիրն է պետական միջամտությամբ մատուցվող ծառայությունների և տրամադրվող տրանսֆերտների շարունակականության ապահովումը:

6 Տե՛ս ՀՀ կառավարության 19.11.1998թ. N 727 որոշում:

ԸԿԲՆ ծրագրի իրականացման քաղաքական պատասխանատուն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն (ԱՍՀՆ) է: ԸԿԲՆ ծրագիրն իրականացվում է սոցիալական ծառայությունների տարածքային մարմինների (այսուհետ՝ ՄԾՏՄ) կողմից: Հայաստանում կան 55 ՄԾՏՄ-ներ, որոնցից 38-ը ՀՀ մարզպետարանների աշխատակազմերի առանձնացված ստորաբաժանումներ են՝ սոցիալական ծառայությունների տարածքային գործակալություններ, իսկ 17-ը՝ Երևանի քաղաքապետարանի, Արարատի, Վանաձորի, Գյումրու և Ջերմուկի քաղաքային համայնքների ղեկավարների աշխատակազմերի առանձնացված ստորաբաժանումներ՝ սոցիալական ծառայությունների տարածքային բաժիններ:

ՄԾՏՄ-ները համագործակցում են սոցիալական աջակցության խորհուրդների հետ, որոնք ստեղծվում են ՀՀ կառավարության որոշմամբ և գործում են սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմիններին կից՝ հասարակական հիմունքներով: Սոցիալական աջակցության խորհուրդների կազմում ընդգրկվում են մարզպետարանի ներկայացուցիչը, տեղական ինքնակառավարման մարմնի ներկայացուցիչը, ՄԾՏՄ ներկայացուցիչը, զբաղվածության տարածքային մարմնի ներկայացուցիչը և ոչ առևտրային կազմակերպությունների ներկայացուցիչները:

2.2 Նպաստների տեսակները և չափերը

ԸԿԲՆ ծրագրի շահառու դառնալու (Ընտանեկան նպաստների համակազմում ընդգրկվելու) համար իրեն աղքատ կամ անապահով համարող ընտանիքը պետք է դիմի ՄԾՏՄ: Տվյալ ընտանիքի համար ստեղծվում է սոցիալական քարտ (անձնագիր) և ընտանիքը հաշվառվում է համակարգում: Ընտանիքի համար հաշվարկվում է ընտանիքի անապահովության միավոր, որի մեծությունն էլ որոշիչ է, թե արդյոք այդ ընտանիքը կարող է ստանալ նպաստ, թե ոչ: Անապահովության միավորի մեծությունը կարող է ազդել նաև նպաստի մեծության վրա, ինչպես նաև լինել որոշիչ պետական այլ սոցիալական ծառայություններից օգտվելու համար:

ԸԿԲՆ ծրագրի շրջանակներում առանձնացվում են նպաստների հետևյալ երեք տեսակները⁷.

- 1) ընտանեկան նպաստ՝ երեխա ունեցող աղքատ ընտանիքների համար,
- 2) սոցիալական նպաստ՝ երեխա չունեցող աղքատ ընտանիքների համար,
- 3) հրատապ օգնություն՝ կյանքի դժվարին իրավիճակում գտնվող ընտանիքների համար:

Ընտանեկան և սոցիալական նպաստ կարող են ստանալ հաշվառված այն ընտանիքները, որոնց ընտանիքի անապահովության միավորը (ԸԱՄ) գերազանցում է սահմանային միավորը (ներկայում կազմում է 30.00):

Ընտանեկան նպաստը պարբերաբար (ամսական), շարունակաբար վճարվող նպաստ է: Դրա չափը կախված է ընտանիքում երեխաների քանակից: Այն որոշվում է՝ նպաստի բազային մեծությանը գումարելով յուրաքանչյուր երեխայի հաշվով հավելում: Ընդ որում, յուրաքանչյուր երեխայի հաշվով տրվող հավելման մեծությունը տարբերվում է բարձր լեռնային և սահմանամերձ բնակավայրերի համար, ինչպես նաև՝ ըստ ԸԱՄ մեծության: Բազային մասին ավելացվող հավելումները որոշվում են՝ ըստ ստորև բերված աղյուսակի:

⁷ Տե՛ս «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքը:

Աղյուսակ 1. Ընտանեկան նպաստի բազային մասին ավելացվող հավելումներն ըստ համայնքների

	30.01-35.00 ԸԱՄ դեպքում		35.01-39.00 ԸԱՄ դեպքում		39.01 և ավելի բարձր ԸԱՄ դեպքում	
	Սովորական համայնքներ	Բարձր լեռնային և սահմանամերձ	Սովորական համայնքներ	Բարձր լեռնային և սահմանամերձ	Սովորական համայնքներ	Բարձր լեռնային և սահմանամերձ
18 տարին չըրացած անդամի հավելում, դրամ	5500	6000	6000	6500	6500	7000
4 և ավել 18 տարին չըրացած յուրաքանչյուր անդամի հավելում, դրամ	6500	7000	7000	7500	7500	8000

Աղբյուր՝ ՀՀ կառավարության 14 հունվար 2016 թվականի N 5-Ն որոշում

Ընտանեկան նպաստի բազային մասը 2014-2016 թվականների համար կազմել է 17,000 դրամ:

Սոցիալական նպաստը ևս պարբերաբար (ամսական), շարունակաբար վճարվող նպաստ է: Դրա չափը ԸԱՄ սահմանային չափը գերազանցող բոլոր ընտանիքների համար սահմանվում է առանձին, որը վերջին տարիներին հավասար է 17,000 դրամի⁸:

Հրատապ օգնության տեսակներն են. 1) միանվագ հրատապ օգնությունը և 2) եռամսյակային հրատապ օգնությունը: Միանվագ հրատապ օգնություն կարող են ստանալ ընտանեկան կամ սոցիալական նպաստի իրավունք ունեցող ընտանիքները հետևյալ դեպքերում.

- ընտանիքում երեխայի ծննդյան միանվագ հրատապ օգնություն՝ 50,000 դրամ,
- ընտանիքում երեխայի առաջին դասարան ընդունվելու միանվագ հրատապ օգնություն՝ 25,000 դրամ,
- ընտանիքի անդամի մահվան դեպքում միանվագ հրատապ օգնություն՝ 50,000 դրամ:

Եռամսյակային հրատապ օգնություն կարող են ստանալ այն ընտանիքները, որոնց ԸԱՄ-ը ցածր է սահմանային արժեքից (բայց բարձր է 0-ից): Եռամսյակային հրատապ օգնությունը տրամադրվում է 3 ամիս շարունակ: Ներկայում Եռամսյակային հրատապ օգնության ամսական չափը սահմանված է 17,000 դրամ: Եռամսյակային հրատապ օգնություն տրամադրելու որոշումը կայացնում են ՄԾՏՄ-ները՝ Սոցիալական աջակցության խորհուրդի առաջարկության հիման վրա: Մեկ ընտանիքի կողմից պարբերաբար եռամսյակային հրատապ օգնություն ստանալու վերաբերյալ սահմանափակում չի նախատեսվում:

2.3 Բյուջետային ֆինանսավորումը

ԸԿԲՆ ծրագիրը պետական սոցիալական պաշտպանության ոլորտի երկրորդ խոշոր ծրագիրն է՝ Աշխատանքային կենսաթոշակներ ծրագրից հետո⁹: 2015 թվականին պետական բյուջեից ԸԿԲՆ ծրագրի իրականացմանը նախատեսվել է ուղղել 38.4 մլրդ. դրամ, իսկ 2016 թվականին՝ 38.4 մլրդ. դրամ: Վերջինը կազմում է սոցիալական պաշտպանության բյուջեի 9.5 տոկոսը, կամ պետական բյուջեի 2.8 տոկոսը:


Ծրագրի ֆինանսավորման ծավալները 2008-2016 թվականների ընթացքում շարունակաբար աճել են՝ միջին տարեկան 4.5 տոկոսով: Բացառություն է կազմում 2011 թվականը, երբ ֆինանսավորման

⁸ Միայնակ (անժառանգ) կենսաթոշակառուների համար 2015-ից սահմանվել է ԸԱ միավորի հաշվարկման արտոնյալ պայմաններ, ըստ որի միայնակ չաշխատող անժառանգ կենսաթոշակառուները ստանում են սոցիալական նպաստի իրավունք (եթե ԸԱ միավորը 0 չէ):

⁹ 2015 թվականին աշխատանքային կենսաթոշակները կազմել են 225,626.9 մլն դրամ: Պետական կենսաթոշակային ապահովության մյուս ծրագրերի մասին տե՛ս ՏՀՀԿ, «Սոցիալական պաշտպանության պարզեցված բյուջե 2015»-ում:

ծավալները կրճատվեցին 6.1 տոկոսով: 2011 թվականին նվազել է նաև շահառու ընտանիքների թվաքանակը՝ ավելի քան 18 տոկոսով: Հետագա տարիներին շահառուների թվաքանակն աճել է՝ 2015-ին կազմելով մոտ 105 հազար ընտանիք:

Գծապատկեր 1. ԸԿԲՆ ծրագրի ֆինանսավորման ծավալները և շահառուների քանակը



*Ըստ ՀՀ ԱՍՀՆ 2015 թվականի հաշվետվության
 Աղբյուր՝ ՀՀ 2015-2016թթ. պետական բյուջեի մասին օրենքներ, ՀՀ 2005-2014թթ. պետական բյուջեի կատարման հաշվետվություններ, ՀՀ ԱՍՀՆ 2015 թվականի հաշվետվություն, ՏՀՀԿ հաշվարկներ

Նպաստների միջին մեծությունը 2008-2015 թվականների ընթացքում աճել է մոտ 44 տոկոսով՝ միջին տարեկան աճը կազմել է 6.4 տոկոս: 2015-ին նպաստի միջին մեծությունը կազմել է մոտ 30,350 դրամ, իսկ 2016-ին՝ նախատեսվում է, որ կկազմի մոտ 30,538 դրամ:

Ծրագրում ընդգրկված են համակարգում հաշվառված ընտանիքների 77.6 տոկոսը, որոնք կազմում են հանրապետության ընտանիքների 13.5 տոկոսը: Այսպիսով, համակարգում հաշվառված ընտանիքների և Նպաստառու ընտանիքների թվաքանակը 2008-2011 թվականների ընթացքում նվազել է, իսկ 2011-ից հետո՝ աճել:

Թեև պետական բյուջեից ԸԿԲՆ ծրագրի ֆինանսավորման ծավալները բացարձակ արտահայտությամբ աճել են, սակայն սոցիալական պաշտպանության ոլորտի ծախսերի կառուցվածքում դրանց կշիռը շարունակաբար նվազել է: Այն 2015-ին կկազմի սոցիալական պաշտպանության ընդամենը պետական բյուջեի 9.4 տոկոսը (2016-ին՝ 9.5 տոկոս), որը 2008-ի մակարդակը զիջում է 4.2 տոկոսային կետով:


Աղյուսակ 2. Նպաստառու ընտանիքների քանակը 2008-2015 թվականներին

	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
Հաշվառված ընտանիքներ (% ՀՀ ընտանիքների թվից)	21.54	19.16	17.11	14.91	15.9	16.5	17.2	17.4
Նպաստառու ընտանիքներ (% հաշվառվածների թվից)	73.25	73.4	78.77	78.94	77.69	79.77	77.71	77.57
Նպաստառու ընտանիքներ	121,160	107,492	105,005	91,575	96,309	102,570	104,130	105,408
Նպաստառու ընտանիքներ (% ՀՀ ընտանիքների թվից)	15.77	14.0	13.5	11.77	12.36	13.16	13.37	13.53
Երեխա ունեցող ընտանիքներ (% նպաստ. ընտանիքներից)	76.34	81.19	78.28	78.07	80.69	76.97	76.27	76.91
Նպաստի միջին մեծություն, դրամ	21,100	23,560	26,850	26,850	29,350	29,350	30,350	30,350

Աղբյուր՝ ՀՀ ԱՍՀՆ 2013-2015 թվականների հաշվետվություններ

2015-ի տվյալները դեռևս էականորեն զիջում են 2008-ի տվյալներին. 2008-ին ընտանեկան նպաստ է ստացել հանրապետության ընտանիքների մոտ 15.8 տոկոսը (121 հազար ընտանիք), իսկ 2015-ին՝ 13.5 տոկոսը (105 հազար ընտանիք): Կրճատվել է նաև հաշվառված ընտանիքների թիվը. եթե 2008-ին հաշվառված են եղել հանրապետության ընտանիքների 21.5 տոկոսը, ապա 2015-ին՝ ընդամենը 17.4 տոկոսը:

Գծապատկեր 2. ԸԿԲՆ ծրագրի կշիռը սոցիալական պաշտպանության ընդամենը բյուջեում, տոկոս




Աղբյուր՝ ՀՀ 2015-2016թթ. պետական բյուջեի մասին օրենքներ, ՀՀ 2008-2014թթ. պետական բյուջեի կատարման հաշվետվություններ, ՀՀ ԱՍՀՆ 2015 թվականի հաշվետվություն, ՏՋՀԿ հաշվարկներ

ՀՀ կառավարությունը յուրաքանչյուր տարեկան հաստատում է տվյալ տարվա պետական բյուջեով ԸԿԲՆ ծրագրին հատկացված միջոցների բաշխումն ըստ հիմնական ուղղությունների և մարզերի: Մասնավորապես, 2015-ի համար սահմանվել է, որ 82.7 տոկոսը կուղղվի ընտանեկան նպաստների վճարմանը, 13.0 տոկոսը՝ սոցիալական նպաստների վճարմանը, իսկ 4.3 տոկոսը՝ հրատապ դրամական օգնությանը: ՀՀ ԱՍՀՆ նախարարը կարող է տարվա վերջին եռամսյակում, ըստ անհրաժեշտության, կատարել ֆինանսական միջոցների վերաբաշխում՝ ըստ ընտանեկան, սոցիալական նպաստների և հրատապ օգնությունների ընդհանուր միջոցների մեկ տոկոսի սահմաններում¹⁰: Միաժամանակ, ՀՀ կառավարությունը սահմանել է, որ ԸԿԲՆ ծրագրի բյուջեի 3

¹⁰ 2015 թվականի ընտանեկան նպաստի, սոցիալական նպաստի, հրատապ օգնության և մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի չափերը սահմանելու մասին ՀՀ կառավարության N 19-Ն որոշում, 15 հունվարի 2015 թվական:

տոկոսը¹¹ կուղղվի եռամսյակային հրատապ օգնությանը:

Գծապատկեր 3. ԸԿԲՆ ծրագրի ֆինանսավորման կառուցվածքը 2015 թվականին, տոկոս



Աղբյուր՝ ՀՀ կառավարության 15 հունվար 2015 թվականի N 19-Ն որոշում, ՏՀՀԿ հաշվարկներ

Ուշագրավ է, որ ընդհանուր բյուջեի ամենամեծ մասը՝ մոտ 18 տոկոսը, բաժին է հասնում Լոռու մարզին: Հաջորդում են Երևանը, Շիրակը և Գեղարքունիքը գրեթե նույնական կշռով՝ 14 տոկոս:

2.4 Միջնաժամկետ և երկարաժամկետ նպատակադրումները

2016-2018 թվականների ՄԺԾԾ-ում սահմանվում են առաջիկա տարիների համար ԸԿԲՆ ծրագրի նպատակադրումները և թիրախները: Ըստ այդմ, Նպաստառու ընտանիքների թվաքանակի և նպաստի միջին ամսական մեծության փոփոխություն չի նախատեսվում: 2016-2018 թվականների ընթացքում չեն փոխվի նաև բյուջետային ֆինանսավորման անվանական ծավալները:

Հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում (ՀՁՌԾ)¹² ԸԿԲՆ ծրագրի նպատակադրումները և թիրախները առավել լավատեսական են: Դրանք, ընդհանուր առմամբ, հիմնվում են տնտեսական աճի և աղքատության կրճատման առավել լավատեսական կանխատեսումների վրա:

ՀՁՌԾ-ը նախատեսում է, որ երկարաժամկետում կաճի բյուջետային ֆինանսավորումը և նպաստի միջին ամսական չափը, սակայն, աղքատության կրճատման շնորհիվ (ԸԿԲՆ ծրագրի պոտենցիալ շահառուների կրճատման միջոցով), կնվազի ծրագրի փաստացի շահառուների թվաքանակը: Ընդ որում, ՀՁՌԾ-ն նպատակադրել էր, որ 2017 թվականից ի վեր ԸԿԲՆ ծրագրում ընդգրկված կլինեն աղքատության ստորին շեմից ներքև գտնվող (ծայրահեղ աղքատ և շատ աղքատ) ընտանիքների 94.5 տոկոսը, իսկ արդեն 2018 թվականից՝ 100 տոկոսը:

ՀՁՌԾ-ով 2021 թվականի համար ԸԿԲՆ ծրագրի բյուջետային ֆինանսավորման ցուցանիշը, 2016-ի պետական բյուջեի մասին օրենքով նախատեսված ցուցանիշի համեմատ, մեծ է 46 տոկոսով, իսկ նպաստի միջին անվանական ամսական մեծությունը՝ շուրջ 72 տոկոսով:

¹¹ ՄԾՏՄ-ներին թույլատրվում է ընտանեկան նպաստի և սոցիալական նպաստի հասցեականության մեծացմանն ուղղված այլ միջոցների կիրառման հետևանքով ազատված ֆինանսական միջոցներն ուղղել եռամսյակային հրատապ օգնություն տրամադրելուն՝ ոչ ավելի, քան նախատեսված ընդհանուր ֆինանսական միջոցների 5 տոկոսի չափով:

¹² ՀՀ 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրն ընդունվել է ՀՀ կառավարության կողմից, 2014-ի մարտի 27-ի N442-Ն որոշմամբ:

Աղյուսակ 3. ԸԿԲՆ ծրագրային ցուցանիշների կանխատեսումներ, 2016–2025թթ.

	2016 Բյուջե	2017 ՄԺԾԾ	2018	2017	2021 ՀԶՈԾ	2025
Վերջնական արդյունքի ցուցանիշ						
Շահառու ընտանիքների թվաքանակ	104,685	104,685	104,685	104,685	89,221	65,883
Ֆինանսական ցուցանիշներ						
Նպաստի միջին ամսական չափը, դրամ	30,538	30,538	30,538	56,099*	52,390*	106,600*
ԸԿԲՆ ծրագրի ֆինանսավորում, մլն.դրամ	38,362	38,362	38,362	37,125	56,099	84,271
ԸԿԲՆ ծրագրի ֆինանսավորում, ՀՆԱ-ի տոկոս	0.7	0.7	0.7	0.6	0.6	0.6
Նպաստառու ընտանիքների հարաբերակցությունն աղքատության ստորին շեմից ցած գտնվող ընտանիքներին, տոկոս	-	-	-	94.5	100	100

* Հաշվարկվել է հիմք ընդունելով բերված աճի ինդեքսները:


Աղբյուր՝ ՀՀ 2016-2018 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր, ՀՀ 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, ՏՀՀԿ հաշվարկներ

3. Ծրագրի ազդեցության և հասցեականության վերլուծություն

3.1 ԸԿԲՆ ծրագիրը և աղքատությունը Հայաստանում

Ըստ ՀՀ ԱՎԾ Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջական հետազոտությունների (SSԿԱՀ) արդյունքների, Հայաստանում աղքատության ցուցանիշները վերջին տարիներին նվազման միտում են ունեցել, թեև դեռևս բավականին բարձր են՝ 2007-2008 թվականների համեմատ: Աղքատության մակարդակը (աղքատության վերին գծից ցածր կենսամակարդակ ունեցող բնակչությունը) 2014 թվականին կազմել է 30 տոկոս: Բնակչության 11 տոկոսը համարվել է «շատ աղքատ» (աղքատության ստորին գծից ներքև գտնվողներն են), իսկ 2.3 տոկոսը՝ «ծայրահեղ աղքատ», որոնք չեն բավարարում նվազագույն պարենային գծի մակարդակը:

Գծապատկեր 4. Աղքատության ցուցանիշները Հայաստանում 2007-2014 թվականներին



Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, SSԿԱՀ

ՏՀՀԿ կողմից 2015 թվականին իրականացվել է տնային տնտեսությունների վիճակագրական ընտրանքային հետազոտություն, որն ուղղված էր Հայաստանի տնային տնտեսությունների (SS) և Նպաստառու ընտանիքների սոցիալ-տնտեսական պատկերի գնահատմանը¹³: Ըստ այս հետազոտության տվյալների գնահատվել է, որ 2015-ին Հայաստանի SS-ների 33 տոկոսը և Նպաստառու ընտանիքների 56 տոկոսն աղքատ են: Ծայրահեղ աղքատ են բոլոր SS-ների 2.2 տոկոսը և Նպաստառուների՝ 4.7 տոկոսը¹⁴:

Ստորև աղյուսակում ներկայացվում են նշված երկու աղբյուրների հիման վրա տնային տնտեսությունների աղքատության ցուցանիշների գնահատականների համադրումները:

¹³ ՏՀՀԿ 2015թ. հետազոտության արդյունքների համար տե՛ս «Սոցիալական պատկերը և նպաստառու ընտանիքները Հայաստանում» զեկոյցը:

¹⁴ Տեքստում տնային տնտեսություն (SS) և ընտանիք հասկացություններն օգտագործվում են նույն իմաստով:

Աղյուսակ 4. ՏՏ-ների աղքատության մակարդակի գնահատականների համադրում, տոկոս

	Ընդամենը, տոկոս բոլոր ՏՏ-ներիի նկատմամբ		Նպաստառու, տոկոս բոլորի նպաստառուների նկատմամբ	
	ՏՏԿԱՀ, 2014	ՏՂՀԿ, 2015	ՏՏԿԱՀ, 2014	ՏՂՀԿ, 2015
Աղքատ և ծայրահեղ աղքատ	25.9	33.2	45.2	56.2
Ծայրահեղ աղքատ	1.85	2.2	4.7	4.8
Շատ աղքատ	7.0	9.4	15.3	20.2
Աղքատ	16.97	21.6	25.2	31.3
Ոչ աղքատ	74.2	66.8	54.8	43.8
Ընդամենը ՏՏ-ներ	100	100	100	100


Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ ՏՏԿԱՀ 2014թ. տվյալների բազա, ՏՏԸՀ-2015, ՏՂՀԿ հաշվարկներ և գնահատականներ

ՀՀ կառավարության սոցիալական տրանսֆերտների ծրագրերը մեծ դեր ունեն երկրում աղքատության մակարդակի զսպման առումով: Դրանց բացակայության դեպքում աղքատության մակարդակը Հայաստանում 2013-ին կկազմեր 45.9 տոկոս (32 տոկոսի փոխարեն), իսկ 2014-ին կկազմեր 42.7 տոկոս (30 տոկոսի փոխարեն): Դրանց դերը հատկապես նկատելի է ծայրահեղ աղքատության զսպման առումով:


Ստորև բերվում են աղքատության և ծայրահեղ աղքատության գնահատականները սոցիալական տրանսֆերտների բացակայության դեպքում: Ինչպես երևում է գծապատկերից, սոցիալական ծրագրերի ազդեցության առումով, հատկապես մեծ է կենսաթոշակների ազդեցությունը: ԸԿԲՆ ծրագիրը համեմատաբար շատ ավելի փոքր դեր ունի, սակայն՝ կարևոր: Դրանց բացակայության դեպքում աղքատության մակարդակը 2014-ին թեև էապես չէր աճի, սակայն ծայրահեղ աղքատությունը գրեթե կկրկնապատկվեր (տե՛ս գծապատկեր 5):

Գծապատկեր 5. Սոցիալական տրանսֆերտների ազդեցությունն աղքատության վրա

Աղքատության մակարդակի գնահատականներ, տոկոս




Ծայրահեղ աղքատության մակարդակի գնահատականներ, տոկոս



Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ ՏՏԿԱՀ, ՏՂՀԿ հաշվարկներ

ԸԿԲՆ ծրագիրը 2014-ին 1.9 տոկոսային կետով կամ 45 տոկոսով զսպել է ծայրահեղ աղքատությունը Հայաստանում: Այն հատկապես մեծ ազդեցություն ունի Տավուշի և Վայոց Ձորի մարզերում, ինչպես նաև Արարատում, Շիրակում և Լոռիում (տե՛ս գծապատկեր 6):

Գծապատկեր 6. ԸԿԲՆ ծրագրի արդյունքում ծայրահեղ աղքատության կրճատումն ըստ մարզերի, 2014 թվականի տվյալներ, տոկոս




Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ ՏՏԿԱՀ, ՏՀՀԿ հաշվարկներ

Հարկ է նկատել սակայն, որ ԸԿԲՆ ծրագրի ֆինանսավորման ծավալներն ըստ ՀՀ մարզերի համամասնական չեն աղքատության ցուցանիշներին: Հետևաբար, ծրագրի ազդեցության տարբերություններն առանձին մարզերում պայմանավորված են ոչ միայն ֆինանսավորման ծավալների, այլև՝ իրականացման արդյունավետության տարբերություններով:

Գծապատկեր 7-ում ներկայացվում է մինչև Նպաստների վճարումը ծայրահեղ աղքատ բնակչության գնահատականները և ԸԿԲՆ ծրագրի ֆինանսավորումը Երևանում և մարզերում: Ծայրահեղ աղքատ ընտանիքների համեմատ առավել շատ ռեսուրսներ են ստացել Գեղարքունիքի և Լոռու մարզերը, իսկ առավել քիչ ռեսուրսներ՝ Երևանը, Տավուշի, Արմավիրի և Շիրակի մարզերը:

Գծապատկեր 7. Մինչև Նպաստների վճարումը ծայրահեղ աղքատ ՏՏ-ների թվաքանակի գնահատականները և ԸԿԲՆ ծրագրի ֆինանսավորումն ըստ մարզերի




*Ծայրահեղ աղքատ բնակչության թվաքանակի գնահատականն է Նպաստների բացակայության դեպքում՝ հաշվարկված 2014թ. ՏՏԿԱՀ տվյալների բազայի հիման վրա: Ֆինանսավորման 2015-ի համար պլանային ցուցանիշներն են:

Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ ՏՏԿԱՀ, ՀՀ կառավարության 15.01.2015թ. N 19-Ն որոշում, ՏՀՀԿ հաշվարկներ

Ծրագրի ազդեցությունն աղքատության և ծայրահեղ աղքատության վրա վերջին երեք տարիներին որոշակիորեն թուլացել է: Մասնավորապես, եթե ծրագիրը 2012-ին հանգեցրել է ծայրահեղ աղքատության 48 տոկոսով նվազման, ապա արդեն 2014-ին ավելի քիչ՝ 45 տոկոս:

Գծապատկեր 8. ԸԿԲՆ ծրագրի ազդեցության դինամիկան 2012-2014 թվականներին, տոկոս



Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ ՏՏԿԱՀ, ՏՀՀԿ հաշվարկներ

3.2 ԸԿԲՆ ծրագրին հատկացվող բյուջեն և աղքատության պակասորդ

Հայաստանում աղքատության հաղթահարման համար պահանջվող ընդամենը դրամական միջոցների մեծությունը գնահատելու համար անհրաժեշտ է նախ յուրաքանչյուր աղքատի համար գնահատել աղքատության տրված գծերի համեմատ եկամուտների (ծախսերի) տարբերությունները:

ԸԿԲՆ ծրագիրն ըստ էության, նպատակ ունի դրամական տրանսֆերտների միջոցով կրճատել այդ տարբերությունը: 2014-ին աղքատության խորության ցուցանիշը կազմել է 4.5 տոկոս¹⁵ և ԸԿԲՆ ծրագրից հետո դեռևս մեկ աղքատի համար միջին հաշվով պակասել է 6099 դրամ՝ աղքատության գծից վերև հայտնվելու համար:


Ըստ տարբեր բնակավայրերի և աղքատության պաշտոնական գծերի համար մենք գնահատել ենք աղքատության հաղթահարման համար անհրաժեշտ ընդամենը տարեկան դրամական մեծությունները՝ ընթացիկ (փաստացի) իրավիճակի և ԸԿԲՆ ծրագրի բացակայության ենթադրության պարագայում: Ստացված տվյալների համաձայն¹⁶ Հայաստանում աղքատության հաղթահարման համար աղքատներին պակասել է ընդամենը տարեկան 66 միլիարդ դրամ: ԸԿԲՆ ծրագրի բացակայության դեպքում այդ գումարը (աղքատության պակասորդը) կկազմեր 87 միլիարդ դրամ: Շատ աղքատների դեպքում պակասորդը կազմում է 20 միլիարդ դրամ, իսկ ԸԿԲՆ ծրագրի բացակայության դեպքում՝ 35 միլիարդ դրամ (տե՛ս գծապատկեր 9):

Այսպիսով, աղքատության վերացման համար պահանջվող գումարը բավականին փոքր է սոցիալական պաշտպանության պետական բյուջեից: Սոցիալական պաշտպանության պետական բյուջեն, առանց կենսաթոշակների, 2014-ին կազմել է 125 միլիարդ դրամ, իսկ 2015 թվականին՝ 140 միլիարդ դրամ (տե՛ս գծապատկեր 9):

¹⁵ Աղքատության խորությունը ցույց է տալիս, թե որքանով է աղքատների սպառումը միջին հաշվով ցածր աղքատության գծից՝ հաշվարկված որպես մեկ բնակչի հաշվով աղքատության գծի նկատմամբ տոկոս:

¹⁶ Առավել մանրամասն տվյալները ներկայացվում են աղյուսակ 22-ում:

Գծապատկեր 9. Աղքատության պակասությունների գնահատականները և սոցիալական պաշտպանության բյուջեն




* Սոցիալական պաշտպանության պետական բյուջեն է առանց կենսաթոշակների (աշխատանքային, սպայական անձնակազմի, զինծառայողների և նրանց ընտանիքների և ՀՀ օրենքներով նշանակված կենսաթոշակները):
Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ ՏՏԿԱՀ, ՏՋՀԿ հաշվարկներ

Եթե դիտարկենք սույլ ԸԿԲՆ ծրագրի բյուջեն, ապա, ինչպես երևում է գծապատկերից, դա բավարար չէ դրամական տրանսֆերտների միջոցով աղքատությունը հաղթահարելու համար: Սակայն, ԸԿԲՆ ծրագրի բյուջեն գրեթե հավասար է շատ աղքատների ծախսերի/եկամուտների պակասուողին և բավականին մեծ է ծայրահեղ աղքատության պակասուողից:

Տեսականորեն, կատարյալ հասցեականության պարագայում, գոյություն ունեցող բյուջեի շրջանակներում, հնարավոր է ԸԿԲՆ ծրագրի միջոցով Հայաստանում ամբողջությամբ հաղթահարել շատ աղքատությունը: Ծայրահեղ աղքատության հաղթահարման համար անհրաժեշտ բյուջեն շատ ավելի փոքր է: Այն կազմում է 7.4 միլիարդ դրամ, որը մոտ 4-5 անգամ զիջում է ԸԿԲՆ ծրագրի բյուջեն: Գործնականում, հասցեականության բարելավման արդյունքում, ամբողջությամբ իրատեսական է առկա բյուջեի շրջանակներում Հայաստանում լիովին հաղթահարել ծայրահեղ աղքատությունը և շատ աղքատության զգալի մասը:

Գծապատկեր 10. Ծայրահեղ աղքատների և շատ աղքատների համար պակասությունները և ԸԿԲՆ ծրագրի բյուջեն, միլիարդ դրամ




Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ ՏՏԿԱՀ, ՏՋՀԿ հաշվարկներ

3.3 ԸԿԲՆ ծրագրի հասցեականությունը

ԸԿԲՆ ծրագրի շրջանակներում տնային տնտեսություններին տրամադրվող Նպաստների վճարման համար հիմք է ծառայում ընտանիքների անապահովության գնահատման համակարգը: Այս համակարգի արդյունքում առավել շատ ռեսուրսներ են հասել աղքատներին, քան կիսաներեթե հասցեավորման որևէ փորձ չկիրառվեր: Այսինքն՝ կիրառվող համակարգը պրոգրեսիվ է: Առաջին քվանտիլում պրոգրեսիվության գործակիցը կազմել է մոտ 2.75, ինչը նշանակում է, որ ամենաաղքատ 20 տոկոսին ԸԿԲՆ ծրագրի բյուջեից հասել է 2.7 անգամ ավելի շատ ռեսուրս, քան անապահովության գնահատման համակարգի չկիրառման (պատահական բաշխման) պարագայում:

Այնուհանդերձ, համակարգի արդյունավետությունը բավականին ցածր է, քանի որ ռեսուրսների 25-30 տոկոսը փաստացի հասնում է ոչ աղքատ՝ վերին 3 քվանտիլային խմբերին (գծապատկեր 11):

Գծապատկեր 11. ԸԿԲՆ ծրագրի շահառուների և բյուջեի բաշխումն ըստ քվանտիլային խմբերի




*Քվանտիլները բերվում են մինչև Նպաստների վճարումը Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ ՏՏԿԱՀ, ՏՁՀԿ հաշվարկներ

Համակարգում մեծ է ինչպես «ընդգրկման սխալը», այնպես էլ «չընդգրկման սխալը»: Դրա մասին են վկայում ինչպես 2014 թվականի ՏՏԿԱՀ տվյալները, այնպես էլ ՏՁՀԿ 2015 թվականի ՏՏ հետազոտության տվյալները:

Եթե որպես համակարգի շահառուներ դիտարկենք բոլոր աղքատներին, ապա չընդգրկման սխալը կկազմի 73 տոկոս (ըստ ՏՏԿԱՀ՝ 79 տոկոս): Այսինքն, 2015-ին աղքատների 73 տոկոսը փաստացի ընդգրկված չեն եղել համակարգում:

Չընդգրկման սխալը շատ աղքատների համար (ներառյալ ծայրահեղ աղքատները) կազմում է 63 տոկոս (73 տոկոս՝ ըստ ՏՏԿԱՀ), իսկ միայն ծայրահեղ աղքատների համար՝ 56 տոկոս (69 տոկոս՝ ըստ ՏՏԿԱՀ): Այսպիսով, ծայրահեղ աղքատների նվազագույնը 56 տոկոսը չի օգտվում ԸԿԲՆ ծրագրից:

Գծապատկեր 12. Ընդգրկման և չընդգրկման սխալի գնահատականները




Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ ՏՏԿԱՀ տվյալների բազա, ՏՏՀՀ-2015, ՏՀՀԿ հաշվարկներ և գնահատականներ

Ինչ վերաբերում է ընդգրկման սխալին, ապա բոլոր աղքատների համար այն 2014 թվականին, ըստ ՏՏԿԱՀ տվյալների, կազմել է 55 տոկոս, իսկ ըստ ՏՀՀԿ 2015 թվականի տվյալների՝ 43.8 տոկոս: Շատ աղքատների (ներառյալ ճայրահեղ աղքատները) համար ընդգրկման սխալը կազմել է 80 տոկոս՝ ըստ ՏՏԿԱՀ 2014թ. տվյալների և 75 տոկոս՝ ըստ ՏՀՀԿ 2015թ. տվյալների: Միայն ճայրահեղ աղքատների համար ընդգրկման սխալը կազմել է 95 տոկոս (և՛ ըստ ՏՏԿԱՀ 2014թ. և՛ ըստ ՏՀՀԿ 2015թ տվյալների): Դա նշանակում է, որ համակարգում ընդգրկվածների 95 տոկոսը 2014-2015 թվականներին չեն հանդիսացել ճայրահեղ աղքատներ:

Ըստ բնակավայրերի ընդգրկման սխալը բավականին տարբեր է: Ընդգրկման սխալը ամենացածրը երևանում է և ամենաբարձրը՝ մարզային քաղաքներում: Շատ աղքատների համար ընդգրկման սխալը մարզային քաղաքներում 82.4 տոկոս է, այն դեպքում, երբ երևանում՝ 68 տոկոս է:


Գծապատկեր 13. Ընդգրկման սխալի գնահատականներն ըստ բնակավայրերի ճայրահեղ աղքատների և շատ աղքատների համար, 2015թ.



Աղբյուրը՝ ՏՏՀՀ-2015, ՏՀՀԿ

Ի տարբերություն ընդգրկման սխալի, չընդգրկման սխալը մեծ է Երևանում՝ շատ աղքատների համար 67.7 տոկոս, իսկ ծայրահեղ աղքատների համար՝ 80 տոկոս: Չընդգրկման սխալը փոքր է գյուղերում. շատ աղքատների համար կազմում է 58.6 տոկոս, իսկ ծայրահեղ աղքատների համար՝ 33 տոկոս:

Գծապատկեր 14. Չընդգրկման սխալի գնահատականներն ըստ բնակավայրերի՝ ծայրահեղ աղքատների և շատ աղքատների համար, 2015թ.




4. Ծրագրի ընկալումը և շահառուների գոհունակությունը

ՏՀՀԿ կողմից 2015 թվականին իրականացված ՏՏ ընտրանքային հետազոտության (ՏՏԸՀ-2015) տվյալներով՝ ԸԿԲՆ ծրագրի (Ընտանեկան նպաստների համակարգի) մասին Հայաստանի ՏՏ-ների 29 տոկոսը բավականին լավ տեղեկացված է, իսկ մոտ 60 տոկոսը՝ տեղեկացված է, բայց ոչ մանրամասն: Ծրագրի մասին բոլորովին տեղյակ չեն ՏՏ-ների 11 տոկոսը¹⁷:

Տեղեկացվածության մակարդակը բավականին ցածր է Երևանում՝ ՏՏ-ների 17 տոկոսը տեղյակ չէ: Ընտանեկան նպաստների համակարգի մասին տեղյակ չեն գյուղերում ՏՏ-ների մոտ 8 տոկոսը, իսկ քաղաքներում՝ մոտ 7 տոկոսը:

Գծապատկեր 15. Տեղեկացվածությունը ԸԿԲՆ ծրագրի մասին, տոկոս



Աղբյուրը՝ ՏՏԸՀ-2015, ՏՀՀԿ

Ընտանեկան նպաստների համակարգում հաշվառված է ՏՏ-ների 18.9 տոկոսը: Հաշվառման մակարդակը գյուղերում և մարզային քաղաքներում գրեթե հավասար է՝ ՏՏ-ների մոտ 25 տոկոս, իսկ Երևանում խիստ ցածր է՝ 8.2 տոկոս:

Հաշվառված են և ստանում են Նպաստներ (ընտանեկան կամ սոցիալական) ՏՏ-ների 14 տոկոսը, 3.5 տոկոսը նախկինում ստացել է և ներկայում չի ստանում, 0.5 տոկոսը ստանում է միանվագ հրատապ և եռամսյակային դրամական օգնություն:

Աղյուսակ 5. Ընտանեկան նպաստների համակարգում հաշվառված ՏՏ-ները, տոկոս


	Երևան	Գյուղ	Քաղաք	Ընդամենը
Հաշվառված են համակարգում	8.2	25.2	25.5	18.9
Ստանում են ամսական նպաստ	5.6	19.6	18.1	14.0
Նախկինում ստացել են, ներկայում չեն ստանում ամսական նպաստ	1.6	4.0	5.2	3.5
Ստացել են հրատապ օգնություն	0.5	0.5	0.6	0.5
Հաշվառված են, սակայն ոչինչ չեն ստացել	0.5	1.1	1.7	1.0
Հաշվառված չեն համակարգում	91.8	74.8	74.5	81.0
Ընդամենը	100	100	100	100

Աղբյուրը՝ ՏՏԸՀ-2015, ՏՀՀԿ

¹⁷ Ըստ ՏՏԿԱՀ 2014թ. տվյալների ՏՏ-ների չափահաս անդամների միայն 83.7 տոկոսն է տեղյակ, որ տնտեսական դժվարությունների դեպքում կարող է դիմել ԱԾՏԿ՝ ընտանեկան նպաստ ստանալու համար, իսկ ծայրահեղ աղքատ ՏՏ-ների դեպքում՝ 73.5 տոկոսը:

Չհաշվառման հիմնական պատճառն այն է, որ SS-ներն իրենց աղքատ չեն համարել և չեն դիմել՝ 51 տոկոս: Չհաշվառվածների 6.7 տոկոսը չի դիմել, քանի որ ըստ իրենց. «իրենց չեն հանդիսանում համակարգի շահառուներ»: Չհաշվառվածների 9 տոկոսի դեպքում է, որ պատճառը տեղեկացվածությունն է: 5.8 տոկոսը չեն դիմել, քանի որ համարում են, որ «ընտրությունն արդար չէ»: Պահանջվող փաստաթղթերի և տեղեկանքների ձեռքբերման դժվարությունները որպես չհաշվառման պատճառ է նշել SS-ների 3.4 տոկոսը: Բերվող պատասխանների տարբերակներում ուշագրավ է՝ «Դիմել ենք, մերժվել ենք» պատասխանը: Նման պատասխան են տվել SS-ների 21 տոկոսը:


Գծապատկեր 16. Ընտանեկան նպաստի համակարգում չհաշվառման պատճառները, տոկոս




Աղբյուրը՝ ՏՏԸՀ-2015, ՏՀՀԿ

Իրականացված որակական հետազոտությունները և դիտարկումները պարզ են դարձնում, որ Հայաստանում բավականին տարածված են ընտանեկան նպաստների համակարգում ընդգրկվելու և նպաստներ ստանալու համար լրացուցիչ, ոչ ֆորմալ վճարումների, մասնավորապես՝ առաջին ամիսների նպաստի գումարից պահումների դեպքերը:

Գծապատկեր 17. Նպաստառուների քանակ, որոնք նշել են, որ իրենցից պահանջվել է լրացուցիչ վճարումներ, տոկոս



Գծապատկեր 18. Նպաստառուների քանակ, որոնք գիտեն իրենց ընտանիքի անապահովության միավորը, տոկոս




Աղբյուրը՝ ՏՏԸՀ-2015, ՏՀՀԿ

Այնուհանդերձ, ՏՏԸՀ-2015 տվյալների համաձայն, Նպաստառուների միայն 6 տոկոսն է խոստովանել, որ իրենցից պահանջվել է լրացուցիչ վճարումներ կամ նպաստի գումարից սկզբնական պահումներ, իսկ 5.5 տոկոսը՝ դժվարացել է պատասխանել այս հարցին: Հաշվի առնելով հարցի զգայունությունը, կարելի է համարել, որ վերը բերվող որակական տեղեկատվությունը հաստատվում է:

Նպաստառուների շրջանում բավականին ցածր է տեղեկացվածությունը իրենց ընտանիքի անապահովության միավորի մասին: Մասնավորապես, Նպաստառու ընտանիքների 76 տոկոսը, չգիտեն, թե որքան է կազմում իրենց ընտանիքի անապահովության միավորը (գծապատկեր 19)¹⁸:

Նպաստառուների գոհունակությունը սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների աշխատանքից բավականին բարձր է: Նպաստառուների 24 տոկոսը շատ գոհ է, իսկ 49 տոկոսը՝ գոհ: Դժգոհ է շատ դժգոհ են ընդամենը 4.2 տոկոսը: 3.7 տոկոսը դժվարացել է պատասխանել:

Գծապատկեր 19. Նպաստառուների գոհունակությունը տարածքային կենտրոնների աշխատակիցների աշխատանքից, տոկոս



Աղբյուրը՝ ՏՏԸՀ-2015, ՏՁՀԿ

Ստորև բերվում են տվյալներ, որոնք ընդհանուր առմամբ բնորոշում են Ընտանեկան նպաստների համակարգի հասարակական ընկալումը: Մասնավորապես, աղյուսակում առանձնացված կերպով ներկայացվում են բոլոր ՏՏ-ների և Նպաստառուների գնահատականները համակարգի վերաբերյալ տարբեր հարցադրումների շուրջ:

«Համակարգը նպաստում է ծուլությանը և անգործությանը» հարցադրմանը մոտ 66 տոկոսը չի համաձայնվել, 16.7 տոկոսը դժվարացել է պատասխանել, իսկ 17.4 տոկոսը համաձայնել է (6.2 տոկոսը վստահ է, 2.6 տոկոսը գիտի համապատասխան դեպքեր, 8.7 տոկոսը՝ լսել է):

«Շատ դեպքերում օգտվում են ոչ աղքատ ընտանիքները» ձևակերպման հետ համաձայն են բոլոր ՏՏ-ների 60 տոկոսը և Նպաստառուների 50 տոկոսը, իսկ համաձայն չեն՝ բոլոր ՏՏ-ների 16 տոկոսը և Նպաստառուների 25 տոկոսը: Դժվարացել են պատասխանել 25 տոկոսը:

Առավել մեծ համաձայնություն ունի հետևյալ ձևակերպումը՝ «Կան շատ աղքատ ընտանիքներ, որոնք չեն օգտվում համակարգից»: Այս մոտեցումը կիսում են բոլոր ՏՏ-ների 67 տոկոսը և Նպաստառուների 59 տոկոսը: Ընդ որում, բավականին մեծ են այն ՏՏ-ների քանակը, որոնք վստահ են դրանում և գիտեն նմանատիպ դեպքեր:

Չարաշահումների և կոռուպցիայի տարածվածության մասին ընկալումը ևս բավականին մեծ է: ՏՏ-ների 11 տոկոսը վստահ է, 4 տոկոսը գիտի դեպքեր, իսկ 25 տոկոսը լսել է այդ մասին:

Աղյուսակ 6. Ընտանեկան նպաստների համակարգի վերաբերյալ տարբեր հարցադրումների գնահատականներ, տոկոս

	Վստահ են	Դեպքեր գիտեն	Լսել են	Ոչ	ԴՊ	Ընդամենը	
Նպաստում է ծուլությանը և անգործությանը	6.2	2.6	8.7	65.9	16.7	100	Բոլոր ՏՏ-ներ
	2.1	0.9	5.3	86.0	5.7	100	Նպաստառուներ
Շատ դեպքերում օգտվում են ոչ աղքատ ընտանիքները	11.6	11.2	37.5	16.3	23.5	100	ՏՏ-ներ
	7.5	6.4	36.6	25.0	24.5	100	Նպաստառուներ
Կան շատ աղքատ ընտանիքներ, որոնք չեն օգտվում	17.2	15.7	34.3	11.6	21.3	100	Բոլոր ՏՏ-ներ
	9.9	10.6	38.1	17.7	23.7	100	Նպաստառուներ
Առկա են չարաշահումներ, կաշառակերության դեպքեր	10.5	3.9	25.0	23.8	36.9	100	Բոլոր ՏՏ-ներ
	5.0	2.8	18.2	38.0	36.1	100	Նպաստառուներ

Աղբյուրը՝ ՏՏԸՀ-2015, ՏՁՀԿ

¹⁸ Ուշագրավ է, որ ըստ հարցազրուցավարների սուբյեկտիվ գնահատականների, իրենց ընտանիքի անապահովության միավորը գիտեն հատկապես բարեկեցիկ ՏՏ-ները:

5. Անապահովության գնահատման բանաձևի վերլուծություն

5.1 Անապահովության գնահատման ցուցանիշները

Ընտանիքի անապահովության միավորը, ինչպես արդեն իսկ քննարկվեց վերևում, որոշիչ նշանակություն ունի որևէ ընտանիքի համար ԸԿԲՆ ծրագրի շահառու դառնալու կամ նպաստի իրավունք ձեռք բերելու առումով: ԸԱՄ-ի որոշման համար հիմք է հանդիսանում տվյալ ընտանիքի յուրաքանչյուր անդամի սոցիալական կարգավիճակը, ընտանիքի անաշխատունակներով ծանրաբեռնվածությունը, եկամուտների մակարդակը և այլն:

ԸԱՄ-ը հաշվարկվում է անապահովության գնահատման 11 ցուցանիշների (բնութագրիչների) հիման վրա և հաշվարկվում է որպես այդ ցուցանիշների արտադրյալ: Հիմք ընդունելով այդ ցուցանիշների սոցիալ-տնտեսական և համակարգում ընդգրկման տեսանկյունից ազդեցության բնույթները՝ դրանք մեր կողմից դասակարգվում են հետևյալ երեք խմբերում.

- Աղքատածին գործոններ և ռիսկեր,
- Հավելումներ,
- Սահմանափակումներ:

«Աղքատածին գործոններ» ցուցանիշների խումբը

ԸԱՄ-ի գնահատման համար գլխավորն «Աղքատածին գործոններ կամ ռիսկեր» ցուցանիշների խումբն է: Սրանց միջոցով որոշվում է ընտանիքի անապահովության աստիճանը՝ ելնելով տվյալ ընտանիքի սոցիալ-ժողովրդագրական առանձնահատկություններից և մեկ շնչի հաշվով եկամուտների մակարդակից: Այդ խմբում ընդգրկված են հետևյալ 3 ցուցանիշները.

1. Ընտանիքի անապահովության միջին միավորը՝ $P_{միջ}$,
2. Ընտանիքում անաշխատունակների թիվը՝ $K_{ընտ}$ գործակից,
3. Ընտանիքի եկամուտը՝ $K_{եկ}$ գործակից:

Ընտանիքի անապահովության միջին միավորը՝ $P_{միջ}$, հավասար է ընտանիքի անդամների սոցիալական խմբերի անապահովության միավորների թվաբանական միջինին: Ստորև աղյուսակում ներկայացված են սահմանված 19 սոցիալական խմբերը: Դրանք ունեն առավելագույնը՝ 50 և նվազագույնը՝ 17 անապահովության միավոր:

Աղյուսակ 7. ԸԱՄ-ի հաշվարկման համար սահմանված սոցիալական խմբերը

	Անապահովության միավորը	Ծածկագիրը
1 հաշմանդամության I խումբ ունեցող անձ	48	<11
2 հաշմանդամության II խումբ ունեցող անձ	39	<22
3 հաշմանդամության III խումբ ունեցող անձ	28	<33
4 հաշմանդամություն ունեցող երեխա	45	<44
5 երեխա՝ մինչև 5 տարեկան	35	Ա55
6 երեխա՝ 5-18 տարեկան	33	Ա66
7 միակողմանի ծնողազուրկ երեխա	43	Մ23
8 առանց ծնողական խնամքի մնացած երեխա	50	Ե56
9 միայնակ մոր երեխա	26	Մ45
10 ամուսնալուծված անձի երեխա	26	Ա34
11 ուսանող՝ մինչև 23 տարեկան	22	Ս12
12 սովորող՝ 18տ. մինչև դպրոցն ավարտելու տարվա հունիս ամիսը	30	Ս22

13	հղի կին (12 շաբաթ և ավելի ժամկետով)	35	Հ00
14	Գործազուրկ	22	Գ99
15	աշխատանքի շուկայում անմրցունակ անձ	28	Գ98
16	Կենսաթոշակառու	36	Կ88
17	միայնակ չաշխատող կենսաթոշակառու	37	Կ87
18	տարեց կենսաթոշակառու (75 տարեկան և բարձր)	39	Կ86
19	ընտանիքի բացակա կամ սոցիալական խումբ չունեցող անդամ	17	

Աղբյուրը՝ ՀՀ կառավարության 30.01.2014թ. N 145-Ն որոշում

Այսպիսով, ընտանիքի յուրաքանչյուր անդամի համար համապատասխան սոցիալական խմբի նշված անապահովության միավորների գումարը բաժանելով ընտանիքի անդամների թվաքանակի վրա՝ ստացվում է ընտանիքի անապահովության միջին միավորը ($P_{միջ}$):

Ընտանիքի անաշխատունակ անդամների թիվը՝ $K_{ընտ}$ գործակիցը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝ $K_{ընտ} = 1.00 + 0.02 \times (\text{ընտանիքի անաշխատունակ անդամների թիվ})$:

Անաշխատունակ անդամներն են երեխաները, I և II խմբի հաշմանդամ և տարիքային կենսաթոշակի իրավունք ունեցող չաշխատող անձիք: Գործակցի նվազագույն արժեքը 1 է, ինչը նշանակում է, որ ընտանիքում չկան անաշխատունակներ, հետևաբար գործակիցը չի ազդում ԸԱՄ-ի մեծության վրա: Առավելագույն սպասվող արժեքը հավասար է 1.2, երբ ընտանիքում անաշխատունակների թիվը 10 է:

Ընտանիքի եկամուտը՝ $K_{եկ}$ գործակիցը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝ $K_{եկ} = 1.2 - 0.022 \times (\text{մեկ անդամի հաշվով եկամուտ}) / 2000$:

$K_{եկ}$ -ի նվազագույն արժեքը որոշված չէ, իսկ առավելագույն արժեքը 1.2 է (երբ ընտանիքը չունի եկամտի որևէ աղբյուր): Երբ մեկ անդամի հաշվով եկամուտը հավասարվում է 109,091 դրամի, ապա $K_{եկ}$ -ը ստանում է 0 արժեք:

Բանաձևի վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ ընտանիքի մեկ անդամի հաշվով 18,182 դրամ եկամտի մակարդակը հանդիսանում է այն կետը, որից հետո գործակիցը ստանում է 1-ից փոքր արժեք, իսկ մինչև այդ՝ 1-ից մեծ արժեք: Այսինքն, այլ հավասար պայմաններում, եթե ընտանիքի մեկ շնչի հաշվով եկամուտը փոքր է 18,182 դրամից, ապա համակարգում ընդգրկման հավանականությունն աճում է (ընդ որում, որքան փոքր է եկամուտը, այնքան հավանականությունը մեծանում է՝ մինչև 20 տոկոս): Ընտանիքի մեկ անդամի հաշվով եկամուտը որքան մեծ է 18,182 դրամից, այնքան ընտանիքի համակարգում ընդգրկման հավանականությունը սկսում է նվազել:

Ստորև աղյուսակում ներկայացված են եկամուտների տարբեր մակարդակների դեպքում այն նվազագույն միավորը, որ ընտանիքը պետք է կարողանա ապահովել մնացած գործոնների հաշվին՝ համակարգում ընդգրկվելու համար: Թեև համակարգի մուտքը սահմանափակող եկամտի սահմանը կազմում է 109,091 դրամ և ավելի, սակայն գործնականում մեկ շնչի հաշվով 65,000 դրամ եկամտի դեպքում արդեն իսկ համակարգում ընդգրկման հավանականությունը միայն բացառիկ դեպքերում է:

Աղյուսակ 8. Համակարգում ընդգրկվելու համար մյուս գործոնների հաշվին անհրաժեշտ միավորները

Դեպքեր	Մեկ շնչին ընկնող եկամտի մակարդակ	$K_{եկ}$ գործակից	Նվազագույն միավորը մյուս գործոնների հաշվին
Դեպք 1	0	1.20	25.01
Դեպք 2	5,000	1.15	26.10
Դեպք 3	10,000	1.09	27.53
Դեպք 4	15,000	1.04	28.86
Դեպք 5	18,182	1.00	30.01
Դեպք 6	20,000	0.98	30.62
Դեպք 7	25,000	0.93	32.27
Դեպք 8	30,000	0.87	34.49
Դեպք 9	35,000	0.82	36.60
Դեպք 10	40,000	0.76	39.49
Դեպք 11	45,000	0.71	42.27
Դեպք 12	50,000	0.65	46.17
Դեպք 13	55,000	0.60	50.02
Դեպք 14	60,000	0.54	55.57
Դեպք 15	65,000	0.49	61.24
Դեպք 16	70,000	0.43	69.79
Դեպք 17	75,000	0.38	-
Դեպք 18	80,000	0.32	-
Դեպք 19	85,000	0.27	-
Դեպք 20	90,000	0.21	-
Դեպք 21	95,000	0.16	-
Դեպք 22	100,000	0.10	-
Դեպք 23	105,000	0.04	-
Դեպք 24	109,091	0.00	-

Աղբյուրը՝ ՏՀՀԿ հաշվարկներ

«Հավելումներ» ցուցանիշների խումբը

Ի լրումն վերը բերված գործոններով ստացված գնահատականի, գործոնների այս խումբն առանձին ընտանիքների համար ստեղծում է լրացուցիչ հնարավորություն համակարգում ընդգրկման համար: Վերջիններիս միջոցով բանաձևում մտցվում է դիֆերենցում՝ կախված ընտանիքի բնակության վայրից (համայնքից) և բնակարանային պայմաններից: Այսինքն՝ նույն սոցիալ-ժողովրդագրական կառուցվածքը և եկամուտների մակարդակն ունեցող ընտանիքները կարող են ստանալ ԸԱՄ-ի տարբեր գնահատականներ:

«Հավելումներ» կոչված ցուցանիշներով առանձին ընտանիքների համար մեծացվում է «Աղքատաձին գործոններով» որոշված անապահովության գնահատականը, որն ըստ էության, փորձ է կրճատելու համակարգի «չընդգրկման սխալը»: Այս խմբում ներկայացված են երկու ցուցանիշներ.

- 4. Բնակարանային պայմանների գործակիցը՝ $K_{բն}$,
- 5. Բնակավայրի գործակիցը՝ $K_{տ}$:

Բնակարանային պայմանների գործակիցը: Բնակարանային տարբեր պայմանների համար սահմանված են գործակիցներ՝ 1-ից 1.2 միջակայքում: Նվազագույն՝ 1 արժեք է տրվում այն ընտանիքներին, որոնք բնակվում են սեփական առանձնատանը կամ բազմաբնակարան շենքի բնակարանում: Ամենից բարձր գնահատական է տրվում աղետի հետևանքով տրամադրված

տնակներին, որի դեպքում $K_{\text{բն}}$ -ը հավասար է 1.2-ի: Սա նշանակում է, որ այլ հավասար պայմաններում այս տեսակի կացարաններում բնակվող ՏՏ-ների համակարգում հայտնվելու հնարավորությունն ավելանում է 20 տոկոսով, կամ որ նույնն է՝ համակարգում ընդգրկման սահմանային միավորը 30.01-ի փոխարեն կազմում է 25 միավոր:

Վարձակալությամբ բնակվող ընտանիքների մուտքի հնարավորությունն ավելանում է 2 տոկոսով, իսկ վթարային բնակարաններում բնակվողներինը՝ 5 տոկոսով:

Աղյուսակ 9. Բնակարանային տարբեր պայմանների գործակիցները

	Բնակարանային պայմանները	Կբն	Ծածկագիրը
1	աղետի հետևանքով տրամադրված տնակ	1.2	04
2	ոչ հիմնական (ժամանակավոր) շինություն, տնակ	1.06	05
3	վթարային (3-րդ և 4-րդ աստիճանի) բնակարան	1.05	03
4	հանրակացարանի չսեփականաշնորհված սենյակ (բնակարան)	1.03	02
5	այլ՝ վարձակալությամբ կամ առանց դրա ընտանիքին չպատկանող բնակելի տարածություն, հյուրանոց, դպրոց, նկուղ, ավտոտնակ, որոշակի բնակության վայր չունենալը և այլն	1.02	06, 07
6	սեփական առանձնատուն	1	01
7	բնակարան բազմաբնակարան շենքում	1	00

Աղբյուրը՝ ՀՀ կառավարության N 145-Ն որոշում

Բնակավայրի գործակցի՝ $K_{\text{տ}}$, միջոցով տարբերակում է մտցված լեռնային և սահմանամերձ բնակավայրերի ընտանիքների համար՝ մեծացնելով համակարգ նրանց մուտքի հնարավորությունը: Հանրապետության յուրաքանչյուր բնակավայրի համար սահմանված է գործակից, որը հավասար է 1-ի, 1.03-ի կամ 1.05-ի: Սա նշանակում է, որ առանձնացված են որոշ բնակավայրեր, որոնցում բնակվող ՏՏ-ների համար մեծանում է համակարգում հայտնվելու հնարավորությունը՝ 3 կամ 5 տոկոսով:

Առանձնացված բնակավայրերը 215-ն են, դրանցից 33-ը քաղաքային համայնքներ են, իսկ 182-ը՝ գյուղական: Այս բնակավայրերից 151-ի համար $K_{\text{տ}}$ գործակիցը հավասար է 1.05-ի, իսկ 64-ի համար՝ 1.03-ի: Արտոնյալ համայնքները մեծաթիվ են Սյունիքի, Տավուշի և Լոռու մարզերում (տե՛ս աղյուսակ 10):

Ըստ $K_{\text{տ}}$ գործակիցների քաղաքային համայնքների վերլուծությունը վկայում է, որ, ըստ էության, դրանց միջոցով տարբերակում է մտցված Երևանի և Երևանամերձ քաղաքային համայնքների և հանրապետության մյուս քաղաքային համայնքների միջև: Ընդ որում, քաղաքներից 31-ի դեպքում $K_{\text{տ}}$ գործակիցը հավասար է 1.03: Այսինքն՝ քաղաքների մեծամասնության համար համակարգում ընդգրկման սահմանային միավորը 30.01-ի փոխարեն կազմում է 29.13: Միայն Մեղրի և Ագարակ քաղաքների համար այն կազմում է 1.05:

Գյուղերից 146-ի համար գործակիցը ևս հավասար է 1.05-ի, որը նշանակում է, որ համակարգում ընդգրկման սահմանային միավորը իջնում է մինչև 28.6:

Բնակավայրերի ցանկը, ըստ $K_{\text{տ}}$ գործակցի արժեքների, սահմանված է ՀՀ կառավարության 30.01.2014թ. N 145-Ն որոշմամբ:

Աղյուսակ 10. Բնակավայրերի բաշխումն ըստ մարզերի և ըստ Կտ գործակցի արժեքի

	Գյուղեր	Քաղաքներ	Կտ = 1,03	Կտ = 1,05	Ընդամենը
Արագածոտն	3	2	5	0	5
Արարատ	3	0	0	3	3
Արմավիր	15	0	12	3	15
Գեղարքունիք	6	5	6	5	11
Լոռի	28	8	8	28	36
Կոտայք	0	5	5		5
Շիրակ	20	3	16	7	23
Սյունիք	53	7	5	55	60
Վայոց ձոր	7	3	3	7	10
Տավուշ	47	0	4	43	47
Ընդամենը	182	33	64	151	215

Աղբյուրը՝ ՀՀ կառավարության N 145-Ն որոշում, ՏՀՀԿ հաշվարկներ

«Սահմանափակումներ» ցուցանիշների խումբը

«Սահմանափակումներ» կոչված ցուցանիշներով միարժեքորեն որոշվում է, թե արդյոք տվյալ ընտանիքը, անկախ իր ժողովրդագրական, սոցիալական և այլ առանձնահատկություններից կամ վերը նկարագրված ցուցանիշների միջոցով հավաքած միավորներից, կարող է մասնակցել համակարգին, թե ոչ: «Սահմանափակումներ» ըստ էության ուղղված են կրճատելու համակարգի «ընդգրկման սխալը»: Այս խմբում առկա են 6 ցուցանիշներ, որոնք ընդունում են 0 արժեք (այսինքն՝ համակարգում ընդգրկվելը թույլատրելի չէ) կամ 1 արժեք (այսինքն՝ համակարգում ընդգրկվելը թույլատրելի է): Այդ ցուցանիշներն են.

6. Սեփական ավտոմեքենայի առկայություն՝ $K_{ավ}$ (առկայության դեպքում=0, այլապես՝ =1),
7. Կենցաղային պայմանների բարելավմանն ուղղված անշարժ գույքի գործարքների իրականացում՝ $K_{ագ}$ (անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռք բերման դեպքում =0, այլապես՝ =1),
8. Ձեռնարկատիրական գործունեության իրականացում՝ $K_{գ}$ (ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու դեպքում=0, այլապես՝ =1),
9. Միջազգային առևտրային գործարքների իրականացում՝ $K_{մաքս}$ (մաքսային վճարներ կատարելու դեպքում=0, այլապես՝ =1),
10. Էլեկտրաէներգիայի սպառման ծավալ՝ $K_{է}$,
11. Ընտանիքի սոցիալ-տնտեսական պայմանների վերաբերյալ ՄԾՏՄ գնահատական՝ K_p (բարեկեցիկ ճանաչված ընտանիքների համար=0, սոցիալապես անապահով ճանաչվածների համար =1):

Էլեկտրաէներգիայի սպառման ծավալ բնորոշող $K_{է}$ գործակցի որոշման համար կիրառվում է հետևյալ բանաձևը՝ $W = 1.3 \times (80կՎտ.ժամ + 40կՎտ.ժամ \times n)$ որտեղ՝ W -ն՝ էլեկտրաէներգիայի սպառման սահմանաչափն է, իսկ n -ը՝ ՏՏ անդամների քանակն է:

Եթե տվյալ ընտանիքի համար էլեկտրաէներգիայի սպառումն ամառային ամիսներին գերազանցում է տվյալ բանաձևով հաշվարկված սահմանաչափը, ապա $K_{է}$ գործակիցը ստանում է 0 արժեք, հակառակ դեպքում՝ 1 արժեք:

Ուսումնասիրությունները վկայում են, որ սահմանված էլեկտրաէներգիայի չափաքանակները բավականին բարձր են և անապահով ընտանիքների այսօրյա իրականությունը չեն բնութագրում: Այլ կերպ ասած, ամառային ամիսներին նման սահմանաչափերում կարող են տեղավորվել նաև ոչ

աղքատ, նույնիսկ բարեկեցիկ ընտանիքները: Այսպես՝ 1 անդամ ունեցող ընտանիքի համար սահմանված առավելագույն սահմանաչափը կազմում է 6084 դրամ¹⁹, 2 անդամի դեպքում՝ 8112 դրամ, 3 անդամի դեպքում՝ 10140 դրամ, 4 անդամի դեպքում՝ 12168 դրամ և այլն:

Մեր հետազոտական տվյալների համաձայն՝ 2015-ին Հայաստանում միջին ՏՏ էլեկտրաէներգիայի սպառումն ամառային ամիսներին կազմել է 7,757 դրամ:

Աղյուսակ 11. Հայաստանի ՏՏ-ներում էլեկտրաէներգիայի փաստացի սպառման գնահատականներ 2015 թվականի համար, միջին ամսական, ՀՀ դրամ

	Երևան	Այլ քաղաքներ	Գյուղեր	Ընդամենը
Ամառային ամիսների միջին (հուլիս)	8,557	7,046	7,506	7,757
Մեդիան	8,000	7,000	7,000	8,000
Նվազագույն 10%, միջին	2,780	2,300	2,239	2,517
Առավելագույն 10%, միջին	16,698	13,746	15,430	15,540

Աղբյուրը՝ ՏՁՀԿ, 2015

5.2 ԸԱՄ-ի գնահատման վարժություն 4 անդամ ունեցող ՏՏ-ների համար

ՏՁՀԿ ՏՏՀՀ 2015 հետազոտության արդյունքների համաձայն՝ Նպաստառու ՏՏ-ները, հանրապետության մյուս ՏՏ-ների համեմատ, առավել երիտասարդ և բազմանդամ են: Դրանցում առավել շատ են կանայք, երեխաները և հաշմանդամները: Նպաստառուների ընդհանուր կազմում գերակշռում են 4 և 5 անդամ ունեցող ՏՏ-ները: Նպաստառուների 24 տոկոսն ունի 4 անդամ, 23 տոկոսը՝ 5 անդամ և 17 տոկոսը՝ 6 անդամ (ընդհանուր կշռելով 63 տոկոս): Ընդգրկման սխալը մեծ է և համակարգը անարդյունավետ է հատկապես 4 անդամից բաղկացած ՏՏ-ների դեպքում:

Ստորև քննարկվում է 4 անդամից բաղկացած ՏՏ-ների հիպոթետիկ օրինակներ: Մասնավորապես, քննարկվում են ընտանիքում ըստ երեխաների առկայության 3 օրինակներ՝ երեխաների տարիքային խմբերում ընդգրկման 2 տարբերակով:

Այսպես, օրինակ 1-ում դիտարկվում է այն դեպքը, երբ ընտանիքում կան 3 երեխաներ և 1 մեծահասակ: Եթե մեծահասակը չունի պաշտոնապես ձևակերպված աշխատանք և ցույց չի տալիս եկամտի աղբյուր, ապա ԸԱՄ-ը կկազմի 40.4 (եթե երեխաները մինչև 5 տարեկան են), կամ՝ 38.3 միավոր (եթե երեխաները մինչև 5-18 տարեկան են): Ինչպես երևում է աղյուսակից, 4 անդամից բաղկացած երեխա ունեցող բոլոր ՏՏ-ները, եթե կարողանան թաքցնել իրենց եկամուտները, ապա կունենան սահմանային միավորից (30 միավոր) բարձր ԸԱՄ և կարող են հայտնվել Նպաստառուների ցանկում: Դրանց համար պարզապես բավարար է տարածքային կենտրոնի դրական եզրակացությունը:

Հարկ է նկատել նաև, որ եթե ընտանիքը ունենա հավելումներ բնակարանային պայմանների (օրինակ՝ ապրի վարձով կամ տնակում) և, կամ բնակավայրի գործակցի տեսքով, ապա կարող է ԸԱՄ-ի սահմանային մեծությունը հաղթահարել նաև եկամուտների որոշակի մակարդակի պայմաններում:

Այս պարզ վարժությունը ցույց է տալիս, որ սուբյեկտիվ գործոնը կարող է շատ մեծ դեր ունենալ համակարգում ընդգրկման համար: Հետևաբար, ընտանիքի սոցիալ-տնտեսական պայմանների վերաբերյալ ՄԾՏՄ գնահատականները պետք է լինեն խիստ օբյեկտիվ:

¹⁹ Հաշվարկված է 39 դրամ միջին սակագնով:

Աղյուսակ 12. ԸԱՄ-ի հաշվարկ 4 անդամից բաղկացած ՏՏ-ների օրինակով

	Օրինակ 1 3 երեխա + 1 մեծահասակ	Օրինակ 2 2 երեխա + 2 մեծահասակ	Օրինակ 3 1 երեխա + 3 մեծահասակ
Երեխաների քանակ	3	2	1
Մեծահասակների քանակ (չունեն գրանցված աշխատանք)	1	2	3
Տարբերակ Ա. Երեխաները 0-5 տարեկան տարիքային խմբում են			
Երեխաների անապահովության միավոր	105.0	70.0	35.0
Գործազուրկների անապահովության միավոր	22.0	44.0	66.0
Աշխատանքային շուկայում անմրցունակության միավոր	1.06	1.04	1.02
Ընտանիքի անապահովության միավոր	33.7	29.6	25.8
Եկամուտների բացակայություն դեպք	1.2	1.2	1.2
Ընտանիքի անապահովության միավոր	40.4	35.6	30.9
Տարբերակ Բ. Երեխաները 5-18 տարեկան տարիքային խմբում են			
Երեխաների անապահովության միավոր	99	66	33
Գործազուրկների անապահովության միավոր	22	44	66
Աշխատանքային շուկայում անմրցունակության միավոր	1.06	1.04	1.02
Ընտանիքի անապահովության միավոր	32.1	28.6	25.2
Եկամուտների բացակայություն դեպք	1.2	1.2	1.2
Ընտանիքի անապահովության միավոր	38.5	34.3	30.3

Աղբյուրը՝ ՏՁՀԿ հաշվարկներ

5.3 Անապահովության գնահատման բանաձևի բարելավման մոտեցումներ

Ընտանիքների անապահովության գնահատման համակարգը, կամ կիրառվող մոտարկման մոտեցումն ընդհանրապես, կոչված է համակարգում «ընդգրկման սխալի» հնարավորինս բացառմանը: Միաժամանակ, այն որևէ կերպ չպետք է հանգեցնի «չընդգրկման սխալի» դրսևորման: Գործող անապահովության գնահատման բանաձևը բարեփոխման կարիք ունի, որը նախ և առաջ պետք է ուղղված լինի «ընդգրկման սխալի» առավելագույն կրճատմանը: Ընդհանուր մոտեցումը պետք է լինի՝ «ներքևից մուտքի ազատ հնարավորություն, իսկ վերևից՝ խիստ սահմանափակումների կիրառում»:

«Ընդգրկման սխալի» կրճատման պարագայում է հնարավոր գործնականում նվազեցնել նաև «չընդգրկման սխալը»: «Ընդգրկման սխալի» կրճատումը կձևավորի ռեսուրս նաև նպաստի միջին մեծության աճի համար:

Անապահովության գնահատման առկա համակարգը Հայաստանում կիրառվում է արդեն իսկ բավականին երկար՝ ավելի քան 15 տարի: Այդ ընթացքում թեև տեղի են ունեցել փոփոխություններ, սակայն այն, ընդհանուր առմամբ, որոշակիորեն հնացել է: Մյուս կողմից, համակարգի առանձին մասնակիցներ գտել են սողանցքներ՝ սահմանափակումները շրջանցելու և համակարգին ադապտացվելու համար:

Մենք գտնում ենք, որ անապահովության գնահատման համակարգը կարող է ենթարկվել առավել խորը քննության և արմատական փոփոխությունների: Այնուհանդերձ, հնարավոր է նաև փուլային՝ աստիճանական փոփոխությունների տարբերակը:

Մասնավորապես, անապահովության գնահատման բանաձևի մասով ներկայացվում են հետևյալ առաջարկները.

1. Վերանայել ընտանիքի «հարգելի բացակա» անդամի որոշման պայմանները.

Համաձայն ՀՀ կառավարության 24 փետրվարի 2011 թվականի N 178-Ն որոշման, եթե ընտանիքի անդամը 6 ամիս և ավելի ժամկետով բացակայում է ՀՀ-ից և ներկայացնում համապատասխան փաստաթուղթ, ապա համարվում է «հարգելի բացակա» և չի հաշվառվում ընտանիքի անդամների կազմում: Այս հանգամանքը թույլ է տալիս, օրինակ, արտերկրում աշխատող և եկամուտներ ստացող միգրանտների ընտանիքներին արհեստականորեն մեծացնել ԸԱՄ-ը:

2. Վերանայել Ընտանիքի եկամտի գործակիցը.

Առաջարկվում է $K_{եկ}$ գործակիցը հաշվարկել հետևյալ բանաձևով՝

$$K_{եկ} = 1.2 - 0.02 / 2500 \times e, \text{ երբ } e \leq 45,000 \text{ դրամ}$$

$$K_{եկ} = 0, \text{ երբ } e > 45,000 \text{ դրամ}$$

որտեղ e -ն՝ մեկ անդամի հաշվով ամսական եկամուտն է:

Առաջարկվող բանաձևի դեպքում $K_{եկ}$ գործակիցը կհավասարվի 1-ի՝ մեկ անդամի հաշվով 25000 դրամ եկամուտ ունեցող ընտանիքների համար: Դրանից փոքր եկամուտների դեպքում գործակիցը կաճի մինչև 1.2՝ չհանգեցնելով հնարավոր չընդգրկման սխալի: Մյուս կողմից, մեկ անդամի հաշվով 25000 դրամից մեծ եկամտի դեպքում $K_{եկ}$ գործակիցը կնվազի 1-ից՝ զսպելով համակարգում ընդգրկման հնարավորությունը: Ընդ որում, (քանի որ կիրառվում է գծային բանաձև) առաջարկվում է ավելացնել մեկ անդամի հաշվով եկամտի վերևից սահմանափակում՝ 45000 դրամի կամ աղքատության վերին գծի չափով:

3. Մեղմել բնակարանային պայմանների գործակցի ազդեցությունը:

Շատ մեծ է «աղետի հետևանքով տրամադրված տնակի» գործակցի ազդեցությունը՝ 20 տոկոս: Դա էապես տարբերվում է անօթևան և մշտական բնակության վայր չունեցողների գործակցից: Այս հանգամանքն իր հերթին, մնացած մի շարք այլ գործոնների կողքին, նպաստում է բնակչության հիվանդագին կախվածությանը տնակներից և ամեն գնով դրանցից չիրաժարման հակմանը:

Առաջարկվում է 1.2 փոխարեն կիրառել 1.15 գործակից:

4. Վերանայել բնակավայրի գործակիցները:

Խիստ տարբերակում է մտցված Երևանի և երևանամերձ բնակավայրերի, հանրապետության մյուս բնակավայրերի միջև: Շատ բնակավայրեր ստացել են արտոնյալ պայմաններ, այն դեպքում, երբ ծայրահեղ աղքատ կամ շատ աղքատ ընտանիքների տեսանկյունից՝ բնակավայրերի նման տարբերակումն էական չէ: Առաջարկվում է իրականացնել առավել խորը ուսումնասիրություններ և վերանայել բնակավայրերի գործակիցները:

5. Վերանայել էլեկտրաէներգիայի սահմանաչափերը:


Էլեկտրաէներգիայի սահմանված չափաքանակները և ճշգրտման կարիք ունեն, քանի որ դրանք բավականին բարձր են և չեն զսպում ընդգրկման սխալը:

Առաջարկվում է կիրառել հետևյալ բանաձևը՝ $W = 1.3 \times (70 + 30 \times n)$, որտեղ՝ W -ն՝ էլեկտրաէներգիայի սպառման սահմանաչափն է, իսկ n -ը՝ SS անդամների քանակը: Ստորև ներկայացվում է գործող և առաջարկվող տարբերակներում էլեկտրաէներգիայի սահմանված չափաքանակները և դրամային ծախսերը՝ ըստ SS անդամների քանակի:

Աղյուսակ 13. Էլեկտրաէներգիայի ամսական չափաքանակներն՝ ըստ SS անդամների քանակի

SS անդամների թիվը	Գործող սահմանաչափ			Առաջարկվող սահմանաչափ		
	SS էլ.էներգիայի ծախս, կՎտ/ժ	SS էլ.էներգիայի ծախսեր, դրամ Ըստ հին սակագնի	SS էլ.էներգիայի ծախսեր, դրամ Ըստ ընթացիկ սակագնի	SS էլ.էներգիայի ծախսեր, կՎտ/ժ	SS էլ.էներգիայի ծախսեր, դրամ Ըստ հին սակագնի	SS էլ.էներգիայի ծախսեր, դրամ Ըստ ընթացիկ սակագնի
1	156	6084	7644	124	4836	6076
2	208	8112	10192	156	6084	7644
3	260	10140	12740	189	7371	9261
4	312	12168	15288	221	8619	10829
5	364	14196	17836	254	9906	12446
6	416	16224	20384	286	11154	14014
7	468	18252	22932	319	12441	15631
8	520	20280	25480	351	13689	17199
9	572	22308	28028	384	14976	18816
10	624	24336	30576	416	16224	20384
11	676	26364	33124	449	17511	22001
12	728	28392	35672	481	18759	23569
13	780	30420	38220	514	20046	25186

Փծապատկեր 20. Էլեկտրաէներգիայի գործող և առաջարկվող սահմանաչափերն ըստ SS չափի, դրամ



6. Ներդնել արդյունավետ մեխանիզմներ ՄԾՏՍ գործունեության արդյունավետության բարձրացման և սուբյեկտիվ գործոնի նվազման ուղղությամբ:

ՄԾՏՍ գործունեության արդյունավետության բարձրացումը և սուբյեկտիվ գործոնի նվազեցումն էական նշանակություն ունի համակարգի արդյունավետության բարձրացման համար: Մասնավորապես, ընդգրկման սխալի կրճատման առումով շատ կարևոր է ընտանիքի սոցիալ-տնտեսական պայմանների վերաբերյալ տարածքային կենտրոնների եզրակացությունների օբյեկտիվությունը: Այս գործընթացում, առավել արդյունավետ դերակատարություն կարող են ունենալ սոցիալական աջակցության խորհուրդները²⁰: Դրանցում հեղինակավոր տեղական ՀԿ-ների դերակատարությունը պետք է ընդլայնվի: Ինչպես նաև պետք է ներդրվեն հանրային վերահսկողության որոշ մեխանիզմներ: Ընդհանուր առմամբ, սոցիալական աջակցության խորհուրդների գործունեությունը պետք է դառնա առավել հաշվետվողական և թափանցիկ:

²⁰ Սահմանավում են «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով:

6. ԸԿԲՆ ծրագրի բյուջետային ձևակերպումը և մոնիտորինգը

Հայաստանում ծրագրային բյուջետավորման ներդրման գործընթացում ՀՀ ԱՍՀՆ-ը հանդիսանում է առաջամարտիկներից մեկը: Դեռևս 2004 թվականից այս նախարարությունում մեկնարկվել են այս բնագավառում բարեփոխումների պիլոտային աշխատանքները: Ծրագրային բյուջետավորման ներդրման հիմնական նպատակն է ներդրումների (կամ ծախսերի) պլանավորումից անցում կատարել արդյունքների (նպատակների) պլանավորման: ԸԿԲՆ ծրագիրը ծրագրային բյուջետավորման ձևաչափով մշակվող ծրագրերից է:

ԸԿԲՆ ծրագիրը ներկայացվում է ՀՀ պետական բյուջեի գործառնական դասակարգմամբ՝ որպես ինքնուրույն ծրագիր, սակայն ՀՀ պետական բյուջեի ծրագրային դասակարգմամբ, այն ընդգրկված է «Անապահով սոցիալական խմբերին աջակցության ծրագրի» մեջ՝ որպես քաղաքականության միջոցառում (1011 ԾՏ01):

«Անապահով սոցիալական խմբերին աջակցության ծրագրի» նկարագիրը (անձնագիրը) մշակվել է 2014 թվականին: Այս ծրագրի կառուցվածքում ներառված են 5 քաղաքականության միջոցառումներ²¹: ԸԿԲՆ ծրագիրը դրանցից մեկն է և հանդիսանում է տրանսֆերտային ծրագիր: Այստեղ է ներառված նաև «Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների ծրագրի իրականացման ապահովում» քաղաքականության միջոցառումը:

«Անապահով սոցիալական խմբերին աջակցության ծրագրի» նպատակն է սոցիալապես անապահով, աղքատ ընտանիքների կենսամակարդակի բարձրացմանն օժանդակելը կամ դրա վատթարացումը կանխելը:

Յուրաքանչյուր քաղաքականության միջոցառման համար սահմանվում են ուղղակի և վերջնական արդյունքների կատարողական ցուցանիշներ: Ուղղակի արդյունքի ցուցանիշները ցույց են տալիս, թե ինչ արդյունք ձեռք կբերվի քաղաքականության միջոցառումը իրականացնելիս: Վերջնական արդյունքի ցուցանիշը կոչված է չափելու հասարակության վրա ազդեցությունը՝ բնութագրելով ծրագրի նպատակային արդյունավետությունը: ԸԿԲՆ ծրագրի վերջնական արդյունքի ցուցանիշը և ուղղակի արդյունքների ցուցանիշները բերվում են ստորև աղյուսակում:

Աղյուսակ 14. ԸԿԲՆ ծրագրի կատարողական ցուցանիշները

Վերջնական արդյունքի ցուցանիշ

Աղքատության մակարդակի վրա ազդեցության ապահովում՝ Կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների իրավունք ունեցող ընտանիքների թիվ

Ուղղակի արդյունքների ցուցանիշներ

- Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ ստացող ընտանիքների թիվը (տարեկան),
- Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ ստացող ընտանիքների թիվը, որոնց մատուցվում է փոստային ծառայություններ (ամսական),
- Նպաստների նշանակման համար անհրաժեշտ ձևաթղթերի քանակը՝ հատ (ամսական):

Աղբյուրը՝ «Անապահով սոցիալական խմբերին աջակցության ծրագրի» անձնագիր

Ինչպես երևում է աղյուսակից, վերջնական արդյունքի ցուցանիշը սահմանված է Նպաստների իրավունք ունեցող ընտանիքների թիվը, իսկ ուղղակի արդյունքի ցուցանիշը՝ ստացողների թիվը: Մյուս երկու ուղղակի արդյունքի ցուցանիշները վերաբերում են ծրագրի իրականացման հարակից

²¹ Այս ծրագրի կառուցվածքում, բացի ԸԿԲՆ ծրագրից, ներառված են նաև «Սոցիալական օգնության ծառայությունների մատուցման համար պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացմանը աջակցություն» և «ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների, որպես նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցում» ծրագրերը/քաղաքականության միջոցառումները՝ հարակից միջոցառումներով:

քաղաքականության միջոցառմանը՝ Նպաստների տրամադրումն ապահովող ծառայությունների իրականացմանը:

Այսպիսով, սահմանված կատարողական (ոչ ֆինանսական) ցուցանիշներն, ըստ էության, արտահայտում են ֆինանսական կատարումը՝ նկարագրելով նպաստի իրավունք ունեցողների փաստացի իրավունքի իրացման փաստը՝ նպաստների վճարումը: Մինչդեռ, կատարողական (ոչ ֆինանսական) ցուցանիշները պետք է արտահայտեն քաղաքականության իրականացման և ծրագրային կատարման մակարդակը:

Վերջնական արդյունքի ցուցանիշը պետք է բխի ծրագրի նպատակից և ռազմավարական փաստաթղթերով սահմանված թիրախներից՝ արտահայտելով դրանց ձեռքբերման աստիճանը, հնարավորություն տա գնահատել ձեռքբերումներն առաջընթացի տեսանկյունից: Ուղղակի արդյունքի ցուցանիշները պետք է թույլ տան հստակորեն հասկանալ և չափել ծրագրի հիմնական գործողությունների արդյունքները:

Կոնկրետ և չափելի կատարողական (ոչ ֆինանսական) ցուցանիշների համակարգը թույլ կտա ապահովել ԸԿԲՆ ծրագրի պարբերական և արդյունավետ ներքին և արտաքին մոնիտորինգ և գնահատում:

Գոյություն ունեցող կատարողական ցուցանիշները որևէ կերպ չեն արտահայտում, թե որքանով է ԸԿԲՆ ծրագիրը/քաղաքականության միջոցառումը կամ «Անապահով սոցիալական խմբերին աջակցության» ծրագիրը նպաստում երկրում աղքատների կենսամակարդակի բարձրացմանը, աղքատության կամ ծայրահեղ աղքատության կրճատմանը, ռեսուրսների ներդրման արդյունավետությանը, հասցեականության բարելավման խնդիրներին, շահառուների գոհունակությանը և այլն: Այսինքն, առկա ցուցանիշներն, ըստ էության, պիտանի չեն բյուջետային ծրագրի մոնիտորինգի և գնահատման համար²²:

Ընդ որում, այս իրավիճակը կարող է վերաբերվել պետական բյուջետային ծրագրերի մեծամասնությանը և բարեփոխումների ընթացիկ փուլում անհրաժեշտ է առավել մեծ ջանքեր ներդնել որակյալ և գործուն համակարգի ներդրման համար:

ԸԿԲՆ ծրագրի իրականացման մոնիտորինգի և վերահսկողության համար ՀՀ ԱՍՀՆ-ում առկա է համապատասխան ինստիտուցիոնալ կառուցվածք, սահմանված են համապատասխան գործընթացներ: Նախարարության կողմից 2015-ից հրապարակվում են ԸԿԲՆ ծրագրի ընթացիկ կատարման վերաբերյալ եռամսյակային հաշվետվություններ, որոնք հասանելի են ՀՀ ԱՍՀՆ կայքում: Կատարողական ցուցանիշների կատարման մասին տվյալները ներկայացվում են ՀՀ պետական բյուջեի տարեկան կատարման հաշվետվությունում:

Կատարողական ցուցանիշների համակարգի բարելավումը նախ և առաջ կձառայի Նախարարությանը՝ մեծացնելու ներքին մոնիտորինգի արդյունավետությունը և իրավիճակի փոփոխություններին արագ արձագանքելու կարողությունը:

Հաշվի առնելով ԸԿԲՆ ծրագրի կարևորությունը և արդյունավետ իրականացման բարդությունները՝ անհրաժեշտ է, որ ընդլայնվի նաև արտաքին մոնիտորինգի և գնահատման դերը՝ ներառելով նաև հանրային վերահսկողության և մոնիտորինգի մեխանիզմներ:

²² ՀՀ Ֆինանսների նախարարի N 324-Ն հրաման, 28 մարտի 2007 թ., սահմանվում են ՀՀ պետական բյուջեով սահմանված ծրագրերի իրականացման արդյունքի ցուցանիշների (ֆինանսական և ոչ ֆինանսական) կատարման մասին հաշվետվությունների օրինակելի ձևերը և դրանց լրացման պահանջները: Դրանք ըստ էության արտահայտում են ֆինանսական և ոչ ֆինանսական արդյունքների տարեկան կատարման հաշվետվությունները, որոնք հիմնված են ցուցանիշների փաստացի և պլանավորված մակարդակների համեմատության պարզունակ մոտեցման վրա:

Ստորև աղյուսակում բերված են ԸԿԲՆ ծրագրի նպաստակի ձեռքբերմանն ուղղված կատարողական ցուցանիշների առաջարկներ, որոնք կարող են լինել ուղենիշային:

Աղյուսակ 15. ԸԿԲՆ ծրագրի կատարողական նոր ցուցանիշների ուղեցուցային առաջարկներ

Վերջնական արդյունքի ցուցանիշ (տարբերակներ)

- Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ ծրագրի արդյունքում ծայրահեղ և շատ աղքատության կրճատման տոկոս, միջին տարեկան տեմպը (ցուցանիշի վավերացման աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ ՏՏԿԱՀ)
- «Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ» ծրագրում ընդգրկված ծայրահեղ և շատ աղքատ ընտանիքների տոկոս նման ընտանիքների ընդհանուր թվից (ցուցանիշի վավերացման աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ ՏՏԿԱՀ)

Ուղղակի արդյունքների ցուցանիշներ (տարբերակներ)

- Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ ծրագրում ընդգրկված ծայրահեղ և, կամ շատ աղքատ ընտանիքների քանակը, հատ (ցուցանիշի վավերացման աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ ՏՏԿԱՀ)
- Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ ծրագրում ընդգրկված աղքատ երեխաների քանակ, տոկոս երեխաների ընդհանուր թվից (ցուցանիշի վավերացման աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ ՏՏԿԱՀ)
- Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների միջին մեծությունն աղքատության վերին գծի համեմատ, տոկոս

Աղբյուրը՝ ՏՁՀԿ

7. Հիմնական արդյունքների ամփոփում

7.1 ԸԿԲՆ ծրագրի համապատասխանությունը

- Հայաստանում ԸԿԲՆ ծրագրի իրականացումը բխում է «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի պահանջներից, համապատասխանում է ՀՀ կառավարության ծրագրի և ռազմավարությունների նպատակադրումներին, ինչպես նաև երկրի սոցիալ-տնտեսական զարգացման առկա պայմաններին և կարիքներին: Այն աղքատության կրճատմանն ուղղված ամենագործուն գործիքն է Հայաստանում:
- Ծրագրի երկարաժամկետ նպատակադրումները սահմանվում են ՀԶՌԾ-ով, ըստ որի՝ 2018 թվականից ԸԿԲՆ ծրագիրը պետք է ապահովի շատ աղքատ ընտանիքների (աղքատության ստորին շեմից ցած գտնվողների) ամբողջական ծածկույթ: Սակայն, 2016-2018 թվականների ՄԺԾԾ-ով արդեն իսկ այս նպատակադրումները թուլացվել են՝ 2018-ի համար սահմանելով 94.5 տոկոս: Այսինքն ՀՀ կառավարության երկարաժամկետ և միջնաժամկետ ծրագրային թիրախների միջև առկա է անհամապատասխանություն կամ երկարաժամկետ նպատակադրումների իրականացման հետևողականության խախտում:
- Ընդհանուր առմամբ ՀԶՌԾ-ն, թեև ընդունվել է 2014 թվականին, շատ առումներով կարծես թե իրատեսական չէ: Թերևս դրա հիմնական պատճառն այն է, որ դրա հիմքում ընկած տնտեսական զարգացման սցենարն առավել լավատեսական է, քան իրականում տեղի ունի: Միաժամանակ, այդ փաստաթղթի ընդունումից հետո տեղի են ունեցել խոշորագույն իրադարձություններ, որոնք ամենայն հավանականությամբ հաշվի չեն առնվել այս ռազմավարությունում: Մասնավորապես, խոսքը վերաբերվում է Հայաստանի հանկարծակի անդամակցությանը ԵԱՏՄ-ին և եվրոպական առևտրատնտեսական ինտեգրման գործընթացների հետադարձմանը, ինչպես նաև՝ Ռուսաստանում և ընդհանրապես տարածաշրջանում տեղի ունեցող վերջին զարգացումներին: Անկախ այս ամենից, ՀԶՌԾ նպատակադրումները ԸԿԲՆ ծրագրի մասով չեն կարող կորցնել իրենց արդիականությունը:
- ԸԿԲՆ ծրագիրն ուղղված է երկրում աղքատության զսպմանը՝ հետևաբար տնտեսական զարգացման վատատեսական սցենարների պարագայում, անկախ ֆիսկալ իրավիճակից, բյուջետային սահմանափակումներից և ռեսուրսների առկայությունից, ԸԿԲՆ ծրագիրը պետք է ընդլայնվի: Ակնհայտաբար, ճիշտ է նաև հակառակը, տնտեսական զարգացման լավատեսական սցենարների պարագայում ԸԿԲՆ ծրագիրը պետք է աստիճանաբար կորցնի իր դերը: Այս բյուջետային ծրագրի և դրա ֆինանսավորման պահանջը հակադարձ համեմատական է երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակին և բյուջետային հնարավորություններին: Պետական բյուջեի վրա ԸԿԲՆ ծրագրի ճնշման թուլացման մյուս տարբերակը համակարգի արդյունավետության բարձրացումն է:
- Այսպիսով, ԸԿԲՆ ծրագիրը մեծ կարևորություն ունի Հայաստանում աղքատության կրճատման և կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված ընտանիքների աջակցության առումով: Այն համապատասխանում է քաղաքականությունների գերակայություններին և ռազմավարական նպատակադրումներին, հասարակության և շահառուների իրական կարիքներին:
- Այս ծրագրի բացակայությունը կհանգեցնի սոցիալ-ժողովրդագրական, ինչպես նաև տնտեսական չափազանց մեծ բացասական հետևանքների՝ թե՛ կարճաժամկետ, թե՛ երկարաժամկետ հեռանկարում:

7.2 Ձեռք բերված նպատակները և արդյունքները

- ԸԿԲՆ ծրագրի արդյունքում շուրջ 105 հազար ընտանիքներ կամ Հայաստանի բոլոր ընտանիքների մոտ 14 տոկոսը ստացել են դրամական աջակցություն պետությունից: Դրանցից շուրջ 80 հազարը երեխա ունեցող ընտանիքներ են, որոնց մոտ մեկ չորրորդը՝ 3 և ավելի երեխաներ ունեցող ընտանիքներ են:
- ԸԿԲՆ ծրագրի իրականացումը հանգեցրել է երկրում 2 տոկոսային կետով աղքատության և շուրջ կիսով չափ՝ ծայրահեղ աղքատության կրճատման: Այն հատկապես նպաստել է Տավուշի, Վայոց Ձորի և Լոռու մարզերում աղքատության զսպմանը:
- ԸԿԲՆ ծրագրի արդյունքում ծայրահեղ աղքատների 44 տոկոսը, շատ աղքատների 37 տոկոսը և բոլոր աղքատ ՏՏ-ների 27 տոկոսը ստացել են հասարակության աջակցությունը՝ միջին ամսական 30.4 հազար դրամի չափով: ԸԿԲՆ ծրագրում ընդգրկված ընտանիքների 38 տոկոսը կին գլխավորով տնտեսություններ են, իսկ 16 տոկոսը՝ միայն կանանցից կազմված:
- ԸԿԲՆ ծրագիրը հատուկ հասցեագրում է սոցիալապես խոցելի խմբերին, ինչպես նաև բազմազավակ ընտանիքներին՝ կասեցնելով երկրում դեմոգրաֆիական անկումը: Միաժամանակ, ԸԿԲՆ ծրագիրը, ընդգրկելով սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերը, նպաստում է երկրի տարածքային զարգացման խնդիրների թուլացմանը:

7.3 Ռեսուրսների ներդրման արդյունավետությունը

- ԸԿԲՆ ծրագրի արդյունավետության մակարդակն էականորեն բարելավման կարիք ունի: Ներդրված ռեսուրսները կարող են առավել արդյունավետորեն փոխակերպվել սպասվող արդյունքների: Մասնավորապես, ներդրված դրամական միջոցները շուրջ 4-5 անգամ գերազանցում են երկրում ծայրահեղ աղքատության հաղթահարման համար անհրաժեշտ բյուջեն: Հետևաբար, այն լիովին բավարար է, որ գործնականում ծայրահեղ աղքատությունը Հայաստանում ընդհանրապես հաղթահարվի, իսկ շատ աղքատությունը՝ էականորեն կասեցվի:
- ԸԿԲՆ ծրագրի շահառուների ընտրության համար կիրառվում է մոտարկման մեթոդ, որի արդյունքում աղքատներն առավել շատ ռեսուրսներ են ստացել, քան կատանային պատահական բաշխման պարագայում: Այսպիսով, կիրառվող համակարգը պրոգրեսիվ է, սակայն չափազանց մեծ է և՛ «ընդգրկման սխալը», և՛ «չընդգրկման սխալը»:
- Ընդգրկման սխալը շատ աղքատների համար կազմում է 75 տոկոս, իսկ ծայրահեղ աղքատների համար՝ 95 տոկոս: Սա նշանակում է, որ ԸԿԲՆ ծրագրի փաստացի շահառուների 75 տոկոսը շատ աղքատ չէ, իսկ 95 տոկոսը՝ ծայրահեղ աղքատ չէ: Ծրագրում ընգրկվածների մեծամասնությունը ոչ աղքատ են կամ չեն հանդիսանում ծրագրի իրական շահառուներ: Ընդգրկման սխալը մեծ է մարզային քաղաքներում և փոքր՝ Երևանում:
- Չընդգրկման սխալը շատ աղքատների համար կազմում է 63 տոկոս, իսկ միայն ծայրահեղ աղքատների համար՝ 56 տոկոս: Այսինքն՝ շատ աղքատների 63 տոկոսը և ծայրահեղ աղքատների 56 տոկոսը չի օգտվում ԸԿԲՆ ծրագրից: Չընդգրկման սխալը մեծ է Երևանում և փոքր է գյուղերում:
- ԸԿԲՆ ծրագրի արդյունավետության այս պատկերը պայմանավորված է նաև ըստ մարզերի ներդրվող ռեսուրսների (կամ Նպաստառու ընտանիքների քանակի) և աղքատության ցուցանիշների միջև անհամապատասխանությամբ: Երևանում ԸԿԲՆ ծրագրի ծածկույթը կամ փաստացի Նպաստառուների քանակն էապես փոքր է աղքատների քանակի համեմատ: Գեղարքունիքի և Լոռու մարզերում փաստացի Նպաստառուների քանակը (հատկացված

ռեսուրսները) համեմատության մեջ ամենամեծն են: Մինչդեռ՝ ամենաշատ աղքատները և ծայրահեղ աղքատները Շիրակի մարզում են: Ուշագրավ է, որ Տավուշի մարզը համեմատաբար առավել քիչ ռեսուրսներ ստացող մարզերի թվում է, մինչդեռ՝ ծայրահեղ աղքատության զսպման առումով ԸԿԲՆ ծրագիրն այս մարզում ամենարդյունավետներից է:

- Ընտանիքների անապահովության գնահատման գործող համակարգը Հայաստանում կիրառվում է ավելի քան 15 տարիներ և, չնայած դրանում կատարված շարունակական ճշգրտումների, որոշակիորեն հնացել է: Համակարգի առանձին մասնակիցներ գտել են սողանցքներ՝ սահմանափակումները շրջանցելու և համակարգին ադապտացվելու համար: Համակարգի հետագա բարեփոխումներն անհրաժեշտություն են, քանի որ ԸԿԲՆ ծրագրում ընդգրկվածների մեծ մասն աղքատներ չեն, այն դեպքում, երբ ծայրահեղ աղքատների կեսից ավելին ընդգրկված չեն:
- Ծայրահեղ աղքատների և շատ աղքատների ընդգրկման աճը, այսինքն՝ «չընդգրկման սխալի» կրճատումը, գործնականում հնարավոր է «ընդգրկման սխալի» կրճատման պարագայում: Մյուս կողմից, «ընդգրկման սխալի» կրճատումը կարող է հանդիսանալ նաև Նպաստների միջին մեծության բարձրացման համար հիմնական ռեսուրսը:
- Ներկայում, նպաստի միջին մեծությունն աղքատության գծի համեմատ շատ փոքր է (աղքատության վերին ընդհանուր գիծը մեկ շնչի հաշվով կազմում է մոտ 40 հազար դրամ, իսկ նպաստի միջին մեծությունն ամբողջ ընտանիքի համար՝ 30 հազար դրամ): Թեև նպաստն ավելի շուտ ուղղվում է ընտանիքի եկամուտների (կամ ծախսերի) լրացմանը և ոչ թե ամբողջական փոխարինմանը, նպաստի ներկա մեծության էական բարձրացման կարիք կա:
- Առկա համակարգը թույլ է տալիս, պաշտոնապես ձևակերպված աշխատանք չունենալու և եկամտները թաքցնելու պարագայում, 4 անդամից բաղկացած գրեթե բոլոր ՏՏ-ներին հեշտորեն ընդգրկվել համակարգում՝ տարածքային կենտրոնի դրական եզրակացության դեպքում: Ընդ որում, եթե ընտանիքն ունենա հավելումներ բնակարանային պայմանների և, կամ բնակավայրի գործակցի տեսքով, ապա կարող է ընտանիքի անապահովության սահմանային միավորը հաղթահարել նաև եկամուտների որոշակի մակարդակի պայմաններում: Այս հանգամանքը ցույց է տալիս, որ ստվերային տնտեսության ներկա պայմաններում սուբյեկտիվ գործոնը կարող է շատ մեծ դեր ունենալ և խիստ կարևոր է սոցիալական աջակցության խորհուրդների արդյունավետ աշխատանքը:

7.4 Շահառուների գոհունակությունը և ԸԿԲՆ ծրագրի հասարակական ընկալումը

- Ընդհանուր առմամբ, ԸԿԲՆ ծրագիրն իրականացվել է շահառուների գոհունակության բավականին բարձր մակարդակի պայմաններում: Նպաստառուների 24 տոկոսը շատ գոհ է, իսկ 49 տոկոսը՝ գոհ սոցիալական ծառայության տարածքային մարմինների աշխատանքից:
- ԸԿԲՆ ծրագրի մասին տնային տնտեսությունների տեղեկացվածության մակարդակը բավականին բարձր է: Այնուհանդերձ, ՏՏ-ների 11 տոկոսը տեղյակ չէ դրա մասին: Ուշագրավ է, որ տեղեկացվածության մակարդակը ցածր է ծայրահեղ աղքատների շրջանում և Երևանում:
- Տեղեկացվածությունը համակարգում չհաշվառման պատճառներից մեկն է: Ընդհանուր առմամբ, համակարգում հաշվառված են ՏՏ-ների միայն 19 տոկոսը: Այսինքն, շատ ծայրահեղ աղքատ և աղքատ ՏՏ-ներ չեն հաշվառվել ընտանեկան նպաստների համակարգում: Չհաշվառման պատճառը հիմնականում այն է, որի իրենց աղքատ չեն համարում, 21 տոկոսը դիմել է, բայց մերժվել է, 9 տոկոսը՝ տեղեկացված չեն: ՏՏ-ների մոտ 6 տոկոսը չի դիմել հաշվառման, քանի որ կարծում է, որ ընտրությունն արդար չէ:

- ԸԿԲՆ ծրագրի հասարակական ընկալման առումով տարածված է այն մոտեցումը, որ «Կան շատ աղքատ ընտանիքներ, որոնք չեն օգտվում համակարգից»: Այս մոտեցումը կիսում են բոլոր ՏՏ-ների 67 տոկոսը և Նպաստառուների 59 տոկոսը: Բոլոր ՏՏ-ների 60 տոկոսը և Նպաստառուների 50 տոկոսը գտնում է, որ «Շատ դեպքերում համակարգից օգտվում են ոչ աղքատ ընտանիքները»: ՏՏ-ների 17 տոկոսը գտնում է, որ «Համակարգը նպաստում է ծուլությանը և անգործությանը»: Չարաշահումների և կոռուպցիայի տարածվածության մասին ընկալումը ևս բավականին մեծ է՝ նման ընկալում ունեն ՏՏ-ների 40 տոկոսը:

7.5 ԸԿԲՆ ծրագրի բյուջետային ձևակերպում և մոնիտորինգ

- Հայաստանում ծրագրային բյուջետավորման ներդրման գործընթացում ՀՀ ԱՍՀՆ-ն առաջատար պետական գերատեսչություններից է: ԸԿԲՆ ծրագիրը մշակվում է ծրագրային բյուջետավորման ձևաչափով: Ծրագրի վերջնական արդյունքի ցուցանիշը սահմանված է նպաստների իրավունք ունեցող ընտանիքների թիվը, իսկ ուղղակի արդյունքի ցուցանիշը՝ ստացողների թիվը:
- Վերջնական արդյունքի ցուցանիշը պետք է բխի ծրագրի նպատակից և ռազմավարական փաստաթղթերով սահմանված թիրախներից՝ արտահայտելով դրանց ձեռքբերման աստիճանը և առաջընթաց: Ուղղակի արդյունքի ցուցանիշները պետք է թույլ տան հստակորեն հասկանալ և չափել ծրագրի հիմնական գործողությունների արդյունքները:
- ԸԿԲՆ ծրագրի համար սահմանված կատարողական (ոչ ֆինանսական) ցուցանիշներն ավելի շուտ արտահայտում են ֆինանսական կատարումը և ոչ թե քաղաքականության իրականացման և ծրագրային կատարման մակարդակը:
- Կոնկրետ և չափելի կատարողական (ոչ ֆինանսական) ցուցանիշների համակարգի ներդրման դեպքում հնարավոր կլինի բարելավել ներքին և արտաքին մոնիտորինգի և գնահատման աշխատանքների արդյունավետությունը:
- Հաշվի առնելով ԸԿԲՆ ծրագրի կարևորությունը և արդյունավետ իրականացման բարդություններն՝ անհրաժեշտ է, որ ընդլայնվի արտաքին, անկախ մոնիտորինգի և գնահատման դերը՝ ներառելով նաև հանրային վերահսկողության և մոնիտորինգի մեխանիզմներ:

7.6 Հիմնական առաջարկություններ

Հիմնական առաջարկությունները վերաբերում են բյուջետային ծրագրի կատարողական ցուցանիշներին, ԸԿԲՆ ծրագրի կառավարման, մոնիտորինգի և գնահատման գործընթացներին, ինչպես նաև ընտանիքների անապահովության գնահատման համակարգի տարրերին: Մասնավորապես առաջարկվում է.

1. Հստակեցնել ԸԿԲՆ ծրագրի նպատակը՝ թիրախավորելով Հայաստանում ծայրահեղ աղքատության ամբողջական հաղթահարումը և շատ աղքատության էականորեն կասեցումը:
2. Համապատասխանաբար վերանայել նաև բյուջետային ծրագրի վերջնական արդյունքի և ուղղակի արդյունքի կատարողական (ոչ ֆինանսական) ցուցանիշները՝ օգտվելով վերը բերված ուղեցուցային տարբերակներից (տե՛ս բաժին 6):
3. Ապահովել ԸԿԲՆ ծրագրի վերջնական արդյունքի և ուղղակի արդյունքի ցուցանիշների կապը ՀՂԾ-ի նպատակադրումների հետ, երաշխավորել երկարաժամկետ ռազմավարությունների հետևողական իրականացումը:

4. ԸԿԲՆ ծրագրի իրականացման արդյունավետության վերաբերյալ իրականացնել մարզային կամ տարածքային համեմատական վերլուծություններ: Պարբերական քննության առարկա դարձնել ըստ մարզերի ֆինանսավորման, ծրագրային ձեռքբերումների և աղքատության ցուցանիշների համեմատականները: Ըստ մարզերի և տարածքների սահմանել միջանկյալ կատարողական թիրախներ և ներդնել խրախուսման համակարգ:
5. Բարձրացնել ՍԾՏՄ և սոցիալական աջակցության խորհուրդների աշխատանքների արդյունավետությունը՝ ներդնելով համապատասխան մեխանիզմներ և ընթացակարգեր, ընդլայնելով հեղինակավոր տեղական ՀԿ-ների դերակատարությունը:
6. Լրացուցիչ ջանքեր ներդնել ծայրահեղ աղքատ և շատ աղքատ ընտանիքների բացահայտման, տեղեկացման և համակարգում ընդգրկման խոչընդոտների վերացման ուղղությամբ՝ օգտվելով տեղական ՀԿ-ների և շահերի պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունների աջակցությունից:
7. ԸԿԲՆ ծրագրում ընդլայնել անկախ մոնիտորինգի և գնահատման դերը: Հասարակության առավել մեծ ուշադրության առարկա դարձնել ԸԿԲՆ ծրագրի իրականացումը և արդյունքների քննարկումը: Ստեղծել մեխանիզմներ հանրային վերահսկողության ներդրման համար: Ապահովել ԸԿԲՆ ծրագրի կատարման և առաջընթացի վերաբերյալ պարբերական հաշվետվությունների, ներքին ու արտաքին գնահատումների առավել լայն հասանելիություն:
8. Խորը և բազմակողմանի քննության առարկա դարձնել ընտանիքների անապահովության գնահատման համակարգը՝ նախապատրաստվելով արմատական փոփոխությունների: Մինչ այդ ձեռնարկել համակարգի աստիճանական, փուլային վերանայումներ:

Ընտանիքների անապահովության գնահատման բանաձևի մասով, մասնավորապես, ներկայացվում են հետևյալ առաջարկները (տե՛ս բաժին 5.3).

9. Վերանայել ընտանիքի «հարգելի բացակա» անդամի որոշման պայմանները,
10. Վերանայել ընտանիքի եկամուտ գործակիցը (բանաձևը ներկայացվում է),
11. Մեղմել բնակարանային պայմանների գործակցի ազդեցությունը (ներկայացվում է),
12. Վերանայել բնակավայրի գործակիցները,
13. Վերանայել էլեկտրաէներգիայի սահմանաչափերը (բանաձևը ներկայացվում է),
14. Ներդնել արդյունավետ, գործուն մեխանիզմներ Ընտանիքի սոցիալ-տնտեսական պայմանների վերաբերյալ տարածքային կենտրոնների եզրակացությունների օբյեկտիվության բարձրացման և սուբյեկտիվ գործոնի նվազեցման ուղղությամբ:

Վիճակագրական հավելվածներ

Աղյուսակ 16. Աղքատության մակարդակը և աղքատության գծերը Հայաստանում, ՀՀ դրամ

	2004	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014
Ծայրահեղ աղքատներ, տոկոս	4.4	2.0	1.6	3.6	3.0	3.7	2.8	2.7	2.3
Շատ աղքատներ, տոկոս	32.6	14.5	12.6	20.1	21.3	19.9	13.5	13.3	10.9
Աղքատներ, տոկոս	53.5	26.4	27.6	34.1	35.8	35.0	32.4	32.0	30.0
Պարենային (կամ ծայրահեղ) գիծ	12,651	14,147	17,644	17,483	19,126	21,306	21,732	22,993	23,384
Աղքատության ստորին ընդհանուր գիծ	20,704	20,450	24,388	25,217	27,410	29,856	30,547	32,318	33,101
Աղքատության վերին ընդհանուր գիծ	25,386	25,605	29,903	30,920	33,517	36,158	37,044	39,193	40,264
Սպառողական գների միջին տղամ, տոկոս	107	104.4	109	103.4	108.2	107.7	102.6	105.8	103

*Աղքատության ցուցանիշները բերվում են բնակչության մակարդակում Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, ՏՏԱՀ

Աղյուսակ 17. Աղքատության մակարդակի գնահատականներն ԸԿԲՆ ծրագրից առաջ և հետո, 2014 թվական, տոկոս

	Ծայրահեղ աղքատության մակարդակ			Աղքատության մակարդակ		
	Նախքան ԸՆ վճարումը	Փաստացի	Տարբերություն	Նախքան ԸՆ վճարումը	Փաստացի	Տարբերություն
ք. Երևան	2.9	2	-31.0	25.4	25.2	-0.8
Արագածոտն	0.8	0.5	-37.5	18.9	18.7	-1.1
Արարատ	3.7	1.6	-56.8	28.5	28.5	0.0
Արմավիր	3.8	2.9	-23.7	29	29	0.0
Գեղարքունիք	4.3	2.1	-51.2	32.6	32.3	-0.9
Լոռի	6.7	3	-55.2	38.3	36.4	-5.0
Կոտայք	4.1	2.9	-29.3	37.7	37.2	-1.3
Շիրակ	8.7	3.8	-56.3	45.4	44.2	-2.6
Սյունիք	1.4	1	-28.6	24.8	24.2	-2.4
Վայոց ձոր	1.9	0.6	-68.4	18.8	18.2	-3.2
Տավուշ	8.6	2.7	-68.6	34.1	30.6	-10.3
Ընդամենը	4.2	2.3	-45.2	30.6	30	-2.0

*Աղքատության ցուցանիշները բերվում են բնակչության մակարդակում Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ և ՏՁՀԿ հաշվարկներ

Աղյուսակ 18. Նպաստառու ընտանիքների կշիռը և աղքատության մակարդակն ըստ մարզերի, տոկոս

	Նպաստառուների կշիռը			Աղքատության փաստացի մակարդակ		Աղքատության մակարդակը մինչև ԸԿԲՆ	
	Ընդամենը	Այլ քաղաքներ	Գյուղեր	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	Ծայրահեղ աղքատ	Աղքատ
Ընդամենը, ՀՀ	13.9	20.5	17.1	1.8	23.7	3.8	26.6
Երևան	6	-	-	2.3	20.9	3.5	23.7
Քաղաք	20.5	20.5	-	2.0	25.8	4.4	29.3
Գյուղ	17.1	-	17.1	1.4	23.7	3.3	26.1
Արագածոտն	18.6	21.7	17.7	0.6	17.9	0.9	18.8
Արարատ	14	12.9	14.5	1.4	22.2	3.0	23.6
Արմավիր	9.8	9.7	9.9	2.8	25.7	3.7	28.9
Գեղարքունիք	27.2	25.3	28.2	1.9	25.9	3.7	28.1
Լոռի	30.6	33.4	26.4	1.7	29.4	5.4	34.3
Կոտայք	14.9	17.4	11.4	2.5	30.6	4.3	33.3
Շիրակ	23.7	29	15.1	2.1	35.9	6.7	39.8
Սյունիք	9.5	8.1	12.6	0.9	18.5	1.5	21.0
Վայոց ձոր	16.2	14.7	17.1	0.6	16.0	2.2	17.0
Տավուշ	15.4	12.7	17.4	1.9	18.8	5.6	24.4

*Աղքատության ցուցանիշները բերվում են տնային տնտեսությունների մակարդակում Աղբյուրը՝ ՀՀ ԱՍՀՆ, ՀՀ ԱՎԾ, ՏՏԿԱՀ տվյալների բազա, ՏՂՀԿ հաշվարկներ և գնահատականներ

Աղյուսակ 19. Նպաստառու ընտանիքների և աղքատ ՏՏ-ների բաշխումն ըստ մարզերի, տոկոս

	ԸԿԲՆ բյուջեի բաշխում	Նպաստառուների բաշխումը			Մինչև ԸԿԲՆ բաշխում		Փաստացի բաշխում	
		Ընդամենը	Այլ քաղաքներ	Գյուղեր	Ծայրահեղ աղքատ	Աղքատ	Ծայրահեղ աղքատ	Աղքատ
Ընդամենը, ՀՀ	100.0	100.0	43.5	40.5	100	100	100	100
Երևան	14.4	16.0	-	-	33.8	32.7	42.9	32.4
Քաղաք	-	43.5	43.5	-	33.9	32.0	29.3	31.7
Գյուղ	-	40.5	-	40.5	28.7	31.9	23.2	32.5
Արագածոտն	5.9	5.5	1.5	3.9	1.0	2.8	1.3	3.0
Արարատ	8.4	7.8	2.2	5.7	6.1	6.8	5.4	7.2
Արմավիր	5.8	5.5	2.0	3.5	7.5	8.3	10.9	8.3
Գեղարքունիք	14.2	12.6	4.1	8.5	6.2	6.7	6.1	7.0
Լոռի	17.8	19.2	12.5	6.7	12.2	11.1	7.4	10.7
Կոտայք	8.8	8.7	5.9	2.8	9.1	10.0	10.1	10.3
Շիրակ	14.4	14.5	10.9	3.6	14.8	12.5	8.9	12.7
Սյունիք	3.5	3.4	2.0	1.4	2.0	3.9	2.3	3.9
Վայոց ձոր	2.0	1.9	0.7	1.3	0.9	1.1	0.5	1.1
Տավուշ	5.0	4.8	1.7	3.1	6.3	4.0	4.1	3.4

Աղբյուրը՝ ՀՀ ԱՍՀՆ, ՀՀ ԱՎԾ, ՏՏԿԱՀ տվյալների բազա, ՏՂՀԿ հաշվարկներ և գնահատականներ

Աղյուսակ 20. Ընտանեկան նպաստ ստացողների և վճարված գումարների բաշխումն ըստ սպառման քվանտիլների 2013-2014 թվականներին

	Ստորին քվանտիլ	2-րդ քվանտիլ	3-րդ քվանտիլ	4-րդ քվանտիլ	Վերին քվանտիլ
Նպաստառուներ բաշխումը					
2014 թվական	50.6	23.5	11.5	8.9	5.5
2013 թվական	51.5	17.4	12.2	9.7	9.2
Բյուջե բաշխումը					
2014 թվական	53.3	22.6	11.1	8.3	4.7
2013 թվական	54.8	17.4	12.0	8.0	7.8

*Քվանտիլները բերվում են մինչև Նպաստների վճարումը Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ ՏՏԿԱՀ

Աղյուսակ 21. Աղքատության հաղթահարման դրամական արժեքը

	2012	2013	2014
Աղքատների միջին սպառում (մեկ շնչի հաշվով դրամ, ամսական)	31,138	31,964	34,163
Ծայրահեղ աղքատների միջին սպառում (մեկ շնչի հաշվով դրամ, ամսական)	19,774	20,286	20,394
Աղքատներին պահանջվող լրացուցիչ սպառում (մեկ շնչի հաշվով դրամ, ամսական)	5,906	7,229	6,101
Ծայրահեղ աղքատներին պահանջվող լրացուցիչ սպառում (մեկ շնչի հաշվով դրամ, ամսական)	1,958	2,707	2,990
Աղքատության հաղթահարման համար անհրաժեշտ բյուջե (մլրդ դրամ, տարեկան)	69.4	83.9	66.2
Ծայրահեղ աղքատության հաղթահարման համար անհրաժեշտ բյուջե (մլրդ դրամ, տարեկան)	2.0	2.7	2.5
ՀՆԱ, մլրդ դրամ	4,266.5	4,555.6	4,843.2
Պետական բյուջե, մլրդ դրամ	1,006.1	1,142.9	1,235.1
Սոցիալական պաշտպանության պետական բյուջե (մլրդ դրամ, տարեկան)	291.7	297.4	342.5
Կենսաթոշակներ (մլրդ դրամ, տարեկան)*	187.3	187.9	217.6
Սոցիալական պաշտպանության պետական բյուջեն առանց կենսաթոշակների (մլրդ դրամ, տարեկան)	104.441	109.51	124.901
ԸԿԲՆ ծրագրի բյուջե (մլրդ դրամ, տարեկան)	33.1	34.658	35.427

*Ներառում են աշխատանքային, սպայական անձնակազմի, զինծառայողների և նրանց ընտանիքների, ՀՀ օրենքներով նշանակված կենսաթոշակները:

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ ՏՏԿԱՀ և ՏՁՀԿ հաշվարկներ

Աղյուսակ 22. Աղքատության հաղթահարման համար անհրաժեշտ տարեկան բյուջեի գնահատականներ

	Աղքատության մակարդակ, տոկոս			Մեկ աղքատի հաշվով ամսական պակասող գումար, դրամ			Աղքատության հաղթահարման համար անհրաժեշտ տարեկան բյուջե, մլն. դրամ		
	Ծայրահեղ աղքատ	Շատ աղքատ	Աղքատ	Ծայրահեղ աղքատ	Շատ աղքատ	Աղքատ	Ծայրահեղ աղքատ	Շատ աղքատ	Աղքատ
Փաստացի									
Երևան	2.0	9.0	25.2	-2,851	-5,017	-5,787	720	5,798	18,718
Քաղաք	2.9	13.6	34.9	-3,650	-5,103	-6,348	1,072	6,982	22,376
Գյուղ	2.0	10.4	30.0	-2,294	-5,091	-6,085	606	6,962	24,068
Ընդամենը	2.3	10.9	30.0	-2,990	-5,076	-6,099	2,455	20,013	66,017
Մինչև Նպաստների վճարումը									
Երևան	2.9	10.2	25.4	-3,444	-6,176	-6,750	1,283	8,132	22,060
Քաղաք	5.8	18.2	36.1	-5,899	-7,428	-8,583	3,435	13,637	31,323
Գյուղ	4.1	14.7	30.7	-4,469	-6,533	-7,966	2,424	12,623	32,249
Ընդամենը	4.2	14.3	30.7	-4,847	-6,803	-7,864	7,413	35,199	87,188

Աղբյուրը՝ ՏՀՀԿ հաշվարկներ և գնահատականներ ՏՏԿԱՀ-2014 բազայի հիման վրա

Աղյուսակ 23. Ընդգրկման և չընդգրկման սխալի գնահատականները 2015 թվականի համար

	Երևան	Գյուղ	Քաղաք	Ընդամենը
Ընդգրկման սխալ				
Ծայրահեղ աղքատների համար	94.5	95.0	95.7	95.2
Ծայրահեղ և շատ աղքատների համար	68.0	70.3	82.4	75.1
Բոլոր աղքատների համար	33.5	37.4	54.0	43.8
Չընդգրկման սխալ				
Ծայրահեղ աղքատների համար	80.0	33.3	63.6	56.0
Ծայրահեղ և շատ աղքատների համար	67.7	58.6	65.9	63.2
Բոլոր աղքատների համար	85.1	64.2	68.4	72.8

Աղբյուրը՝ ՏՏՀՀ-2015, ՏՀՀԿ

Աղյուսակ 24. Աղքատությունն ըստ երեխաների քանակի և տարիքային խմբերի

	2008	2009	2010	2011	2012	2013	2014
	Աղքատության մակարդակը, տոկոս						
Տարիքային խմբեր							
0-5 տարեկան	32.0	39.6	42.7	45.3	38.8	41.9	34.4
6-9 տարեկան	30.3	40.5	44.1	42.2	38.1	35.5	34.0
10-14 տարեկան	29.7	36.2	37.6	39.1	30.3	32.2	31.6
15-17 տարեկան	32.4	37.5	41.4	40.1	36.3	35.4	34.8
18-19 տարեկան	26.1	32.5	35.3	33.7	34.5	31.5	30.7
Երեխաների թվաքանակ							
Երեխա չկա	25.4	31.3	31.6	29.7	28.8	26.8	27.4
1 երեխա	31.3	37.9	42.2	43.7	38.2	37.5	32.6
2 երեխա	34.4	44.1	45	48.6	42.0	48.0	37.1
3 երեխա և ավելի	34.8	51.8	60.1	77.7	41.6	64.7	54.9
Ընդամենը	27.5	34.1	35.8	35	32.4	32.0	30.0

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, ՏՏԿԱՀ

Աղյուսակ 25. Ծայրահեղ աղքատությունն ըստ երեխաների քանակի և տարիքային խմբերի

	2008	2009	2010	2011	2012	2013	2014
	Ծայրահեղ աղքատության մակարդակ, տոկոս						
Տարիքային խմբեր							
0-5 տարեկան	1.9	4.9	3.4	4.4	4.1	3.6	3.6
6-9 տարեկան	1.8	4.6	4	4.7	3.6	2.8	2.9
10-14 տարեկան	1.5	3.9	3.2	4.5	2.1	2.6	3.1
15-17 տարեկան	2.3	4.8	4.5	4.7	2.7	3.8	3.7
18-19 տարեկան	0.7	3.8	3.7	5.3	3.9	4.6	2.2
Երեխաների թվաքանակ							
Երեխա չկա	1.5	3	2.8	3	2	2.3	1.7
1 երեխա	1.9	3.9	3.2	5.9	3.9	2.8	2.9
2 երեխա	1.6	6.2	2.4	3.8	6.7	2.5	4.2
3 երեխա և ավելի	5.3	13.3	10.4	6.5	2.8	17.0	5.7
Ընդամենը	1.6	3.6	3	3.7	2.8	2.7	2.3

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, ՏՏԿԱՀ

Աղյուսակ 26. Մանկական և ընդհանուր աղքատության ցուցանիշների համեմատական, տոկոս

	Ծայրահեղ աղքատություն			Աղքատություն		
	Ընդհանուր	Մանկական	Տարբերություն	Ընդհանուր	Մանկական	Տարբերություն
2008թ.	1.6	1.6	0.0	27.6	29.8	8.0
2009թ.	3.6	3.8	5.6	34.1	35.7	4.7
2010թ.	3	3.7	23.3	35.8	41.4	15.6
2011թ.	3.7	4.7	27.0	35	41.9	19.7
2012թ.	2.8	3.3	17.9	32.4	36.2	11.7
2013թ.	2.7	3.3	22.2	32	37.3	16.6
2014թ.	2.3	3.3	43.5	30	34.0	13.3

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, ՏՏԿԱՀ և ՏՂՀԿ հաշվարկներ

Գծապատկերների ցանկ

Գծապատկեր 1. ԸԿԲՆ ծրագրի ֆինանսավորման ծավալները և շահառուների քանակը.....	11
Գծապատկեր 2. ԸԿԲՆ ծրագրի կշիռը սոցիալական պաշտպանության ընդամենը բյուջեում, տոկոս.....	12
Գծապատկեր 3. ԸԿԲՆ ծրագրի ֆինանսավորման կառուցվածքը 2015 թվականին, տոկոս	13
Գծապատկեր 4. Աղքատության ցուցանիշները Հայաստանում 2007-2014 թվականներին.....	15
Գծապատկեր 5. Սոցիալական տրանսֆերտների ազդեցությունն աղքատության վրա	16
Գծապատկեր 6. ԸԿԲՆ ծրագրի արդյունքում ծայրահեղ աղքատության կրճատումն ըստ մարզերի, 2014 թվականի տվյալներ, տոկոս.....	17
Գծապատկեր 7. Մինչև Նպաստների վճարումը ծայրահեղ աղքատ SS-ների թվաքանակի գնահատականները և ԸԿԲՆ ծրագրի ֆինանսավորումն ըստ մարզերի	17
Գծապատկեր 8. ԸԿԲՆ ծրագրի ազդեցության դինամիկան 2012-2014 թվականներին, տոկոս.....	18
Գծապատկեր 9. Աղքատության պակասորդների գնահատականները և սոցիալական պաշտպանության բյուջեն	19
Գծապատկեր 10. Ծայրահեղ աղքատների և շատ աղքատների համար պակասորդները և ԸԿԲՆ ծրագրի բյուջեն, միլիարդ դրամ	19
Գծապատկեր 11. ԸԿԲՆ ծրագրի շահառուների և բյուջեի բաշխումն ըստ քվանտիլային խմբերի.....	20
Գծապատկեր 12. Ընդգրկման և չընդգրկման սխալի գնահատականները	21
Գծապատկեր 13. Ընդգրկման սխալի գնահատականներն ըստ բնակավայրերի ծայրահեղ աղքատների և շատ աղքատների համար, 2015թ.....	21
Գծապատկեր 14. Չընդգրկման սխալի գնահատականներն ըստ բնակավայրերի ծայրահեղ աղքատների և շատ աղքատների համար, 2015թ.....	22
Գծապատկեր 15. Տեղեկացվածությունը ԸԿԲՆ ծրագրի մասին, տոկոս	23
Գծապատկեր 16. Ընտանեկան նպաստի համակարգում չհաշվառման պատճառները, տոկոս.....	24
Գծապատկեր 17. Նպաստառուների քանակ, որոնք նշել են, որ իրենցից պահանջվել է լրացուցիչ վճարումներ, տոկոս	24
Գծապատկեր 18. Նպաստառուների քանակ, որոնք գիտեն իրենց ընտանիքի անապահովության միավորը, տոկոս.....	24
Գծապատկեր 19. Նպաստառուների գոհունակությունը տարածքային կենտրոնների աշխատակիցների աշխատանքից, տոկոս	25
Գծապատկեր 20. Էլեկտրաէներգիայի գործող և առաջարկվող սահմանաչափերն ըստ SS չափի, դրամ	34

Աղյուսակների ցանկ

Աղյուսակ 1. Ընտանեկան նպաստի բազային մասին ավելացվող հավելումներն ըստ համայնքների	10
Աղյուսակ 2. Նպաստառու ընտանիքների քանակը 2008-2015 թվականներին	12
Աղյուսակ 3. ԸԿԲՆ ծրագրային ցուցանիշների կանխատեսումներ, 2016-2025թթ.	14
Աղյուսակ 4. ՏՏ-ների աղքատության մակարդակի գնահատականների համադրում, տոկոս	16
Աղյուսակ 5. Ընտանեկան նպաստների համակարգում հաշվառված ՏՏ-ները, տոկոս	23
Աղյուսակ 6. Ընտանեկան նպաստների համակարգի վերաբերյալ տարբեր հարցադրումների գնահատականներ, տոկոս	25
Աղյուսակ 7. ԸԱՄ-ի հաշվարկման համար սահմանված սոցիալական խմբերը	26
Աղյուսակ 8. Համակարգում ընդգրկվելու համար մյուս գործոնների հաշվին անհրաժեշտ միավորները	28
Աղյուսակ 9. Բնակարանային տարբեր պայմանների գործակիցները	29
Աղյուսակ 10. Բնակավայրերի բաշխումն ըստ մարզերի և ըստ Կտ գործակցի արժեքի	30
Աղյուսակ 11. Հայաստանի ՏՏ-ներում էլեկտրաէներգիայի փաստացի սպառման գնահատականներ 2015 թվականի համար, միջին ամսական, ՀՀ դրամ	31
Աղյուսակ 12. ԸԱՄ-ի հաշվարկ 4 անդամից բաղկացած ՏՏ-ների օրինակով	32
Աղյուսակ 13. Էլեկտրաէներգիայի ամսական չափաքանակներն ըստ ՏՏ անդամների քանակի	34
Աղյուսակ 14. ԸԿԲՆ ծրագրի կատարողական ցուցանիշները	35
Աղյուսակ 15. ԸԿԲՆ ծրագրի կատարողական նոր ցուցանիշների ուղեցուցային առաջարկներ	37
Աղյուսակ 16. Աղքատության մակարդակը և աղքատության գծերը Հայաստանում, ՀՀ դրամ	43
Աղյուսակ 17. Աղքատության մակարդակի գնահատականներն ԸԿԲՆ ծրագրից առաջ և հետո	43
Աղյուսակ 18. Նպաստառու ընտանիքների կշիռը և աղքատության մակարդակն ըստ մարզերի	44
Աղյուսակ 19. Նպաստառու ընտանիքների և աղքատ ՏՏ-ների բաշխումն ըստ մարզերի, տոկոս	44
Աղյուսակ 20. Ընտանեկան նպաստ ստացողների և վճարված գումարների բաշխումն ըստ սպառման քվանտիլների 2013-2014 թվականներին	45
Աղյուսակ 21. Աղքատության հաղթահարման դրամական արժեքը	45
Աղյուսակ 22. Աղքատության հաղթահարման համար անհրաժեշտ տարեկան բյուջեի գնահատականներ	46
Աղյուսակ 23. Ընդգրկման և չընդգրկման սխալի գնահատականները 2015 թվականի համար	46
Աղյուսակ 24. Աղքատությունն ըստ երեխաների քանակի և տարիքային խմբերի	46
Աղյուսակ 25. Ծայրահեղ աղքատությունն ըստ երեխաների քանակի և տարիքային խմբերի	47
Աղյուսակ 26. Մանկական և ընդհանուր աղքատության ցուցանիշների համեմատական, տոկոս	47